

Սույն վերլուծության մշակմանն աջակցել է Բրիտանական

Արևելք-Արևմուտք կենտրոնը (ԲԱԱԿ) (www.bewc.org)

ԲԱԱԿ-ը Միացյալ Թագավորությունում գործող հասարակական կազմակերպություն է, որը աջակցում է ԱՊՀ երկրներին իրավական բարեփոխումների հարցում

ԷԶԵԼԻՆՆ ԸՆԴԴԵՄ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԳՈՐԾԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԸՍՏ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ 1991 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի
ՎՃՈՒ

2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍ
«ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

<<http://www.legalguide.am>>

Սույն վերլուծությունում տեղ գտած եզրահանգումներն ու կարծիքները արվել են «Իրավական ուղեցույց» Հասարակական կազմակերպության անդամ, փաստաբան Նարինե Գասպարյանի կողմից, ով էլ լիովին պատասխանատու է դրանց բովանդակության համար: Սույն վերլուծությունը չի կարելի դիտարկել որպես տվյալ գործի հետ կապված իրավական խորհրդատվություն: Այս վերլուծությունը և նրանում արտահայտված կարծիքները հետապնդում են բացառապես կրթական և տեղեկատվական նպատակներ:

Սույն վերլուծությունում արտահայտված կարծիքները հանդիսանում են հեղինակինը և պարտադիր չէ որ համընկնեն «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության և Բրիտանական Արևելք-Արևմուտք կենտրոնի տեսակետների հետ:

© 2005 «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպություն և Բրիտանական Արևելք-Արևմուտք կենտրոն: Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	4
ՄԱՍ 1. ԷԶԵԼԻՆՆ ԸՆԴԴԵՄ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԳՈՐԾԸ	5
Ա. Գործի փաստերի համառոտ շարադրանքը	5
Բ. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հիման վրա բերված դիմումատուի գանգատը	11
Գ. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը	13
ՄԱՍ 2. ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃՌԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ	23
ՄԱՍ 3. ԳՈՐԾԻ ԷԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	37

Ներածություն

Սույն վերլուծությունն իրականացվել է Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) կողմից 1991 թվականի մարտի 18-ին էզելինն ընդդեմ Ֆրանսիայի գործով կայացված վճռի հիման վրա: Գործը վերաբերում է Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայով (այսուհետ՝ «Եվրոպական կոնվենցիա» կամ «ՄԻԵԿ») երաշխավորված հավաքների ազատության խախտմանը:

Սույն վերլուծությունը նպատակ ունի բազմակողմանիորեն ուսումնասիրել գործի փաստերը, ներառյալ Դիմումատուի գանգատի և Ֆրանսիայի կառավարության հակափաստարկները: Վերլուծությունը նաև կանդրադառնա Մարդու իրավունքների Եվրոպական հանձնաժողովի (այսուհետ՝ «Եվրոպական հանձնաժողով») կամ «Հանձնաժողով») և Եվրոպական դատարանի մոտեցումներին՝ վիճարկվող իրավունքների և ազատությունների մեկնաբանման հարցում: Սույն վերլուծությունում մանրամասն անդրադարձ չի կատարվի արդարացի փոխհատուցման հարցերին: Գործի ուսումնասիրությունը, մասնավորապես վճռի վերլուծությունը կկատարվի թեստի կիրառման միջոցով, որով Դատարանը առաջնորդվում է ՄԻԵԿ-ով երաշխավորված իրավունքների և ազատությունների խախտումները քննելիս: Վերլուծությունը նաև կանդրադառնա գործի էական հանգամանքներին, որոնք նշանակալից դեր են ունեցել և դարձել է կարևոր ուղեցույց Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքների ու ազատությունների մեկնաբանման հարցում:

Այս վերլուծությունը ունի ուսուցողական բնույթ և նպատակ ունի իրավաբանի մասնագիտություն ունեցողներին, այդ թվում դատավորներին, փաստաբաններին, իրավաբանական ծառայություններ մատուցողներին, մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված ծրագրերում ներգրավված անձանց և իրավաբանական կրթություն ստացող ուսանողներին, հնարավորություն ընձեռել ծանոթանալու այն չափանիշներին և ստանդարտներին որոնցով առաջնորդվում է Եվրոպական դատարանը Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքները և ազատությունները մեկնաբանելիս:

ՄԱՍ 1. ԷԶԵԼԻՆՆ ԸՆԴԴԵՄ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԳՈՐԾԸ

Ա. Գործի փաստերի համառոտ շարադրանքը

Դիմումատուն՝ պարոն Ռոլանդ Էգելինը, ազգությամբ ֆրանսիացի է, մասնագիտությամբ փաստաբան (avocat), գործով իրադարձությունների ժամանակ ապրում էր Բասսե-Տերեյում (Գվադելուպա) և հանդիսանում էր Գվադելուպայի Փաստաբանների միության Արհեստակցական միության փոխնախագահը: 1983 թվականի փետրվարի 12-ին Գվադելուպայի մի շարք անկախ շարժումներ և արհմիություններ հանրահավաք անցկացրեցին Բասսե-Տերեյում, բողոքի ակցիա կազմակերպելով դատարանի երկու որոշումների դեմ, որոնցով երեք ակտիվիստներ ազատազրկման էին դատապարտվել և տույժերի էին ենթարկվել հանրային նշանակության շենքերը վնասելու համար: Դիմումատուն մասնակցում էր հանրահավաքին և հանրահավաքի ժամանակ տանում էր ցուցապաստառ:

Բասսե-Տերեյի ոստիկանության պետը նույն օրը հաշվետվություն կազմեց և ներկայացրեց տարածքային դատախազին: Հաշվետվությունը, որը կազմված էր տասնմեկ հավելվածներից, ուներ հետևյալ բովանդակությունը.

...Կայարանում լինելու ընթացքում ինձ ռադիոհաղորդազրույթի միջոցով տեղեկացրեցին, որ մի շարք անկախ շարժումների կողմից Շամ դ'Արբոյում (Champ d'Arbaud) ժամը 9-ին կազմակերպվել է հանրահավաք: ... Հանրահավաքը ավարտվեց 10-ն անց 30 րոպեին և այնուհետև մասնակիցները երթ կազմակերպեցին քաղաքի փողոցներով՝ ոստիկանության և դատական համակարգի հասցեին թշնամական արտահայտություններ անելով: Երթի ժամանակ հանրահավաքի մասնակիցները մի շարք շենքերի, մասնավորապես Կենտրոնական գանձապետարանի շենքի վրա տարբեր գույնի ներկերով ոչ պատշաճ նկարներ և գրառումներ էին արել:

Շամ դ'Արբոյից (Champ d'Arbaud) շարժված 450-500 մարդուն Շոելխեր փողոցի (Rue Schoelcher) մոտ միացավ 500 հոգուց բաղկացած մեկ այլ խումբ, կազմելով մոտ հազար հոգուց բաղկացած՝ պարագլուխների կողմից ղեկավարվող խումբ, ովքեր բարձրախոսների միջոցով հայտարարում էին իրենց լոզունգները: Պարագլուխներից ոմանց անձը հայտնի էր: 11-ն անց 10 րոպե հանրահավաքի մասնակիցները մոտեցան ոստիկանության շենքին և հավաքվեցին դրա առջև: ...Հանրահավաքի մասնակիցներն ավելի մոտեցան ոստիկանության շենքին, առաջնորդվելով երկու պարագլուխների կողմից, որոնք այդ տարածքից չէին և որոնց այդ պահի ներկա գտնվող ոստիկանության ծառայողները չէին ձանաչում:

...Հանրահավաքի այլ մասնակիցների մեջ ոստիկանները ձանաչել էին նաև Դոկտոր Կորենտին և փաստաբան պարոն Էգելինը: Նրանք տանում էին պաստառ, որի վրա գրված էին «ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐ-ԲԺԻՇԿՆԵՐ» բառերը: Այնուամենայնիվ, հանրահավաքի մասնակիցների մեծամասնությունը, ներառյալ նրանց առավել ակտիվ ու ազդեցիկ մասը, Բասսե-Տերեյից չէին, հնարավոր է որ նրանց մեծ մասը Գրանդե-Տերրե կղզուց էին, այդ իսկ պատճառով ոստիկանության ծառայողները նրանց չէին ձանաչում:

... Երթը այնուհետև շարունակվեց Ֆելիքս-Էբուե (Félix-Eboue) այգու մոտով և վերջապես հասավ Շամ դ'Արբո (Champ d'Arbaud) որտեղ էլ այն ցրվեց, երկու երկարատև երթադադար կատարելուց հետո, որի ընթացքում հնչում էին ելույթներ

և լոգունգներ սկզբում առաջին ատյանի դատարանի շենքի առջև, դատավորներին վիրավորելու համար, այնուհետև բանտի առջև, իրենց աջակցությունը համախոհներին հաղորդելու համար: Երթի մասնակիցների մեկնումից հետո պարզ դարձավ, որ նրանք, օգտվելով առիթից կանաչ, կարմիր և սև գույնի ներկերով տարբեր վիրավորական և գրպարտող նկարներ և գրառումներ են արել վարչական շենքերի վրա:

Դրանից անմիջապես հետո հետաքննություն սկսվեց, սակայն, չկարողացավ բացահայտել շենքերի վրա նկարներ և գրառումներ կատարողների անձը: Ստացված տեղեկությունների համաձայն նկարների և գրառումների մեծ մասն արվել են մի քանի կանանց կողմից, որոնք Բասսե-Տերրեյից չէին, ինչն էլ հենց արվել է նրանց ինքնությունը չբացահայտելու նպատակով: Նրանցից մեկը, ոչ հավաստի տեղեկությունների համաձայն, ուսուցչուհի է Փուանթ-ա-Փիթրից (Pointe-a-Pitre), բայց այս փաստը ամբողջությամբ հաստատված չէ: Հետախուզական ծառայությունը (**Renseignements généraux**) հաստատեց, որ նկարների համար պատասխանատուները հանրահավաքի մասնակիցների շարքերից են, ովքեր Փուանթ-ա-Փիթրից (Pointe-a-Pitre) եկել են ավտոբուսով: Նրանք այդ անձանց չէին ճանաչում...:

Էգելիմի գործում առկա փաստերի և իրավական ընթացքի նկարագրությունը տրված է աղյուսակում 1-ում:

Աղյուսակ 1

ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ	
1983 թվականի փետրվարի 21	Դատական հետապնդումը սկսվեց 1983 թվականի փետրվարի 21-ին հանրային նշանակության շենքերի վրա վիրավորական և գրպարտող նկարներ և գրառումներ անելու առիթով:
1983 թվականի փետրվարի 24	Փետրվարի 24-ին Բասսե-Տերրեյի վերաքննիչ դատարանին առընթեր Գլխավոր դատախազը գրավոր նամակ ուղարկեց Գվադելուպայի փաստաբանների միության նախագահին, այն նասին, որ 1983 թվականի փետրվարի 21-ին ոստիկանության կողմից ներկայացված զեկույցից պարզ է դառնում, որ պարոն Էգելիմը, Գվադելուպայի փաստաբանների միության անդամը, մասնակցել է դատական համակարգի դեմ ուղղված հանրահավաքին այնպիսի հանգամանքներում, որոնք քրեական օրենսգրքի 226 հոդվածի ¹ համաձայն առաջացնում են պատասխանատվության կիրառման մեծ հավանականություն: Բասսե-Տերրեյի վերաքննիչ դատարանին առընթեր Գլխավոր դատախազը նամակում նաև խնդրում էր, որ Գվադելուպայի փաստաբանների միության նախագահին իրեն հայտնի այս գործի կապակցությամբ իր կարծիքը՝ իր գործընկերների

¹ Քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածի առաջին մասն ունի հետևյալ բովանդակությունը. «Այն անձը, ով իր գործողությունների, կամ գրավոր կամ բանավոր խոսքի միջոցով հրապարակայնորեն փորձել է վարկաբեկել դատարանի որևէ գործողություն կամ որոշում՝ այնպես, որ դա կարող է վնաս պատճառել դատական համակարգի հեղինակությանն ու անկախությանը, պատժվում է ազատազրկմամբ մեկ ամսից մինչև 6 ամիս ժամանակով և/կամ տուգանքով 500-ից մինչև 90,000 ֆրանկի չափով»:

	բացատրությունները լսելուց հետո:
1983 թվականի մարտի 14	1983 թվականի մարտի 14-ին Փաստաբանների միության նախագահը նամակով տեղեկացրեց Գլխավոր դատախազին իր կատարած քննության արդյունքների մասին, նշելով, որ պարոն Էգելինը հանրահավաքի ժամանակ միայնակ [տարել է] ցուցապաստառ, որի վրա գրված է եղել «Գվադելուպայի փաստաբանների միության արհեստակցական միությունը ընդդեմ Անվտանգության և ազատության ակտին»: Դատական համակարգը վիրավորող ոչ մի գործողություն, արարք կամ բառ նրան չի [կարող] վերագրվել: Հանրահավաքին նրա մասնակցությունը հետևաբար հետապնդել [է] Անվտանգության և անկախության ակտի գործողության դեմ իր բողոքը ներկայացնելու նպատակ:...»: այնուհետև նա նշեց, որ եթե նույնիսկ պարոն Էգելինի նկատմամբ դիտարկենք վատագույն տարբերակը, ապա այդ դեպքում անգամ Գլխավոր ոստիկանապետ[ը]...չի մեղադրում իրեն վիրավորական գործողություն, արարք կատարելու կամ բառ օգտագործելու մեջ...»:
1983 թվականի ապրիլի 25	Որոշ ժամանակ անց 1983 թվականի ապրիլի 25-ին Դիմումատուն հրավիրվեց քննությունը իրականացնող դատավորի մոտ որպես վկա ցուցմունք տալու նպատակով և իր հարցազրույցի ժամանակ նշեց, որ այդ դեպքի կապակցությամբ ոչինչ չունի ասելու:
1983 թվականի մայիսի 19	1983 թվականի մայիսի 19-ին գործի քննությունը կարճվեց հանրահավաքի ընթացքում արված նկարների, գրառումների կամ հնչած վիրավորական կամ սպառնալիքների համար պատասխանատուների անձը պարզելու համար ապացույցների բացակայության հիմքով:
ԴԻՄՈՒՄԱՏՈՒԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԿԱՐԳԱՊԱՀՎԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԸ	
1983 թվականի հունիսի 1	1983 թվականի հունիսի 1-ին Գլխավոր դատախազը Փաստաբանների միության նախագահին բողոք ուղարկեց, որտեղ մասնավորապես նշված էր, որ ոստիկանության 1983 թվականի փետրվարի 21-ի զեկույցի համաձայն պարոն Էգելինը մասնակցել էր 1983 թվականի փետրվարի 12-ին կայացած հանրահավաքին: Հանրահավաքի ընթացքում դատարանի շենքի վրա մի շարք վիրավորական նկարներ ու գրառումներ էին արվել, որոշումներից մեկի կայացմանը մասնակցած դատավորին անվանելով Ֆաշիստ և բոլոր դատավորներին՝ 'MAKO' [կավատներ]: Հանրահավաքի մասնակիցները, նույնիսկ, բազմաթիվ դեպքերում մահվան սպառնալիքներ էին հնչեցնում ներկա ոստիկանության ծառայողների նկատմամբ: Բողոքում այնուհետև նշված էր, որ Բասսե-Տերրեյի հետաքննող դատավորը քննություն սկսեց հասարակական շենքերը վնասելու փաստի հետ կապված: Այն բոլոր անձիք, ովքեր, զեկույցի հիման վրա, մասնակցել էին հանրահավաքին հարցաքննվել են և նրանք նշել են, որ կամ չեն տեսել թե ով է նկարներն ու գրառումներն արել, կամ առնվազն չեն ճանաչում պատասխանատու անձանց: Միայն Ռոլանդ Էգելինն է հրաժարվել հարցերին պատասխանելուց: Գործի վարույթն ավարտվել է գործը կարճելու մասին որոշմամբ ... Ավելին որպես վկա հարցաքննվելու ժամանակ գործը քննող դատավորին պատասխանելը մերժելը նրա կողմից արդարադատության նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դրսևորում է:

	<p>Հետևաբար առկա է 1972 թվականի հունիսի 9-ին ընդունված դեկրետի 106-րդ հոդվածի² խախտում: Գլխավոր դատախազը Փաստաբանների միության նախագահին խնդրում էր Փաստաբանների միության շրջանակներում կարգապահական վարույթ հարուցել պարոն Էզելինի նկատմամբ ...»:</p>
<p>1983 թվականի հուլիսի 25</p>	<p>1972 թվականի հունիսի 9-ին ընդունված թիվ 72-468 դեկրետի 104-րդ հոդվածի³ համաձայն 1983 թվականի հուլիսի 25-ին կայացած կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ նիստում, Փաստաբանների Միության Խորհուրդը կայացրեց հետևյալ որոշումը.</p> <p>«...Տարածքային դատախազի պահանջով Փաստաբանների միության նախագահը 1983 թվականի մարտի 14-ին արդեն ներկայացրել էր պարոն Էզելինի նկատմամբ ներկայացված առաջին մեղադրանքի կապակցությամբ իր կարծիքը, որում մասնավորապես ասված էր. «... Ղատական քննությունից չի երևում, որ պարոն Էզելինը մասնակցելով վերը նշված հանրահավաքին խախտել է թիվ 1972 թվականի հունիսի 9-ի դեկրետի 106-րդ հոդվածով սահմանված նորմերը և որ խախտման արդյունքում նրա նկատմամբ որևէ կարգապահական պատասխանատվություն պետք է կիրառվի: ...Ինչ վերաբերում է պարոն Էզելինին ներկայացված երկրորդ մեղադրանքին, ապա ինչպես դատարանի քննության արդյունքներից, այնպես էլ պարոն Էզելինի կողմից տրված բացատրություններից պարզ է դառնում, որ պարոն Էզելինի կողմից դատավորին հարցերին չպատասխանելը պայմանավորված էին Քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածով⁴ և 1972 թվականի հունիսի 9-ի Ղեկրետի 89-րդ հոդվածի դրույթներին իր արարքների համապատասխանության վերաբերյալ որոշակի անհանգստությամբ, այն կապակցությամբ, որ քննությունը վարող դատավորի կողմից հարցման ժամանակ հիշատակվող մարդկանցից մի քանիսը նրա հետ խորհրդակցել են որպես իրավաբանի: ... Խորհուրդը չի կարծում, որ այդ մերժումը կարող է դիտվել որպես անհարգալից վերաբերմունք արդարադատության և</p>

² 1972 թվականի հունիսի 9-ի Ղեկրետի 106-րդ հոդվածն ունի հետևյալ բովանդակությունը.
«Օրենքների կամ կանոնների պահանջների չկատարման, մասնագիտական կանոնների խախտման կամ արժանապատվության, մասնագիտական հեղինակության և ողջախոհության ցանկացած խախտում, նույնիսկ ոչ մասնագիտական գործունեության ընթացքում, փաստաբանների համար առաջացնում է 107-րդ հոդվածով նախատեսված կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառում»:

³ 1972 թվականի հունիսի 9-ի թիվ 72-468 Ղեկրետի 104-րդ հոդվածն ունի հետևյալ բովանդակությունը.
«Փաստաբանների միության խորհուրդը, որպես կարգապահական պատասխանատվություն իրականացնող մարմին, պետք է քննադատի և պատժի այն փաստաբանին, ով հակաիրավական գործողություն կամ անգործություն են ցուցաբերում, կամ նախկին փաստաբաններին, ովքեր այդ ժամանակ եղել Փաստաբանների միության, ուսուցանողների կամ վաստակավոր փաստաբանների ցուցակում»:

⁴ Քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածն ունի հետևյալ բովանդակությունը.
«Քննություն իրականացնելու լիազորություն ունեցող դատավորները, դատավորները և ավագ ոստիկանության ծառայողները (հետաքննության անցկացնող անձինք) դատական լիազորություններն իրականացնելիս իրավունք չունեն պաշտպանվող կողմի իրավունքներից բխող գործողությունները կանխելու նպատակով որպես վկա հարցաքննել անձանց, որոնց նկատմամբ կան մեղավորությունն ապացուցող բավարար հիմքեր»:

	<p>դատական համակարգի նկատմամբ:</p> <p>... Հիմք ընդունելով նշված պատճառները Փաստաբանների միության խորհուրդը որոշեց, որ 1983 թվականի հունիսի 1-ին Գլխավոր դատախազի կողմից ուղարկված գործի կապակցությամբ առկա չէ ոչ մի հանգամանք, ինչի հիման վրա Փաստաբանների միության խորհուրդը պարոն Ռոլանդ Էգելինին ենթարկի կարգապահական պատասխանատվության: Ի լրացումն դրան, խորհուրդը իր որոշմամբ խորհուրդ տվեց, որ Փաստաբանների միության նախագահը հիշեցնի ինչպես Էգելինին, այնպես էլ փաստաբանների միության ամբողջ կազմին վարքագծի ավանդական կանոնների և որպես փաստաբան հանդես գալիս ողջամիտ դատողության կանոնների կիրառման մասին:</p>
<p>1983 թվականի դեկտեմբերի 12</p>	<p>Բասսե-Տերեյի Տարածքային դատախազը Փաստաբանների միության խորհրդի որոշումը բողոքարկեց Բասսե-Տերեյի վերաքննիչ դատարան: 1983 թվականի դեկտեմբերի 12-ին Վերաքննիչ դատարանը փոփոխեց Փաստաբանների միության խորհրդի որոշումը և պարոն Էգելինին ենթարկեց ավելի ծանր կարգապահական պատասխանատվության քան նախազգուշացումը, այն է՝ նկատողության.</p> <p>«...Չի կարելի պնդել, որ պարոն Էգելին բացի իր անձնական ներկայությունից կամ ցուցապաստառ կրելուց, որևէ այլ ակտիվ մասնակցություն է ցուցաբերել հանրահավաքին...: ...Կասկածից վեր է, որ պարոն Էգելինը, որը մասնակցում էր երթին, չէր կարող չտեսնել այդ վիրավորական ու զրպարտական գրառումներ ու նկարները, որոնք մեծ տառերով գրված էին դատարանի, դատավորների ու փաստաբանների աշխատավայրի, և վարչական այլ շենքերի պատերին, և որ նա չէր կարող չլսել վիրավորանքներն ու սպառնալիքները, որոնք որոշակիորեն ուղղված էին ոստիկանության կոնստեբլին (police constable), ինչպես նաև այլ անձանց, ներառյալ վերաքննիչ դատարանի դատավորին ուղղված վիրավորական բացականչությունները, որը տարածաշրջանում և դատական ոլորտում ընդհանրապես, շատ հայտնի անձ է,:</p> <p>...Փաստաբանների միության անդամի մասնագիտական կանոններով պահանջվող վարքագծի նման հրապարակային խախտումը չի կարող արդարացվել... և առաջացնում է 1972 թվականի հունիսի 9-ի Դեկրետի 106-րդ հոդվածով նախատեսված ողջախոհության խախտում:</p> <p>... Բացի այդ, պարոն Էգելինը, գործը քննող դատավորի կողմից որպես վկա հարցաքննվելիս, առանց որևէ պատճառաբանության հրաժարվել է ցուցմունքներ տալ իրեն հայտնի հանգամանքների վերաբերյալ: Դրանով նա խախտել է Քրեական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները⁵, որոնք</p>

⁵ Քրեական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածն ունի հետևյալ բովանդակությունը.
«Բոլոր այն անձինք, ովքեր հրավիրվել են որպես վկա, պարտավոր են ներկայանալ, երդում և ցուցմունքներ տալ, համաձայն քրեական օրենսգրքի 378-րդ հոդվածի պահանջների [մասնագիտական գազտնիքը պահպանելու պարտականություն]:
Եթե վկան չի ներկայանում, քննությունը իրականացնող դատավորը կարող է դիմել դատախազին վկային ոստիկանության միջոցով բերման ենթարկելու միջնորդությամբ և նրա նկատմամբ տուգանք նշանակել 2500-ից մինչև 5000 ֆրանկի չափով: Եթե վկան հետագայում ներկայանում է, ներողություն է խնդրում և բացատրագիր է ներկայացնում, քննությունն իրականացնող

	<p>ենթակա են պարտադիր կատարման բոլոր քաղաքացիների կողմից, և որոնց պահանջների մասին նա, որպես փաստաբան, չէր կարող տեղյակ չլինել:</p> <p>... Վերոգրյալից ելնելով ... Դատարանն իր ամբողջ կազմով հրապարակային նիստում.</p> <p>Վերացրեց Բասսե-Տերեյի վերաքննիչ դատարանին առընթեր Փաստաբանների միության Գվադելուպայի դեպարտամենտի կողմից 1983 թվականի հունիսի 25-ին իրականացված կարգապահական վարույթի արդյունքում կայացված որոշումը, նիստը գումարելով, որպես կարգապահական վարույթ իրականացնող մարմին, վճռեց այդ միության անդամ պարոն Էգելինի նկատմամբ կիրառել նկատողություն, որպես կարգապահական պատասխանատվություն, և գումարի բռնագանձման պահանջ ներկայացնել:</p>
<p>1985 թվականի հունիսի 19</p>	<p>1985 թվականի հունիսի 19-ին Դիմումատուն օրենքի խախտման հիմքով բողոքարկեց Վերաքննիչ դատարանի որոշումը: Նա մասնավորապես պնդում էր, որ իր նկատմամբ կիրառված կարգապահական պատասխանատվությունը խախտել է ՄԻԵԿ-ի 10-րդ և 11-րդ հոդվածները:</p> <p>1985 թվականի հունիսի 19-ին Վճռաբեկ դատարանը Դիմումատուի բողոքը թողեց առանց բավարարման և inter alia սահմանեց հետևյալը.</p> <p>«...Վերաքննիչ դատարանը նշեց, որ պարոն Էգելինը, որը մասնակցում էր հանրահավաքին որպես փաստաբան, լսել էր սպառնալիքներն ու վիրավորանքները և տեսել էր դատավորների, ինչպես նաև փաստաբանների աշխատավայր հանդիսացող դատարանի պատերին արված վիրավորական գրառումները և նկարները, սակայն որևէ կերպ չէր արտահայտել իր անհամաձայնությունը այդ դեպքերի վերաբերյալ, չէր առանձնացրել իրեն այդ հանցավոր արարքներից, կամ չէր լքել երթը: Դա իրավունք է տալիս եզրակացնել, որ նման վարքագիծը խախտում է ողջախոհության շրջանակները և առաջացնում է կարգապահական խախտում...:</p> <p>...Քրեական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածը պարտավորեցնում է ցուցմունքներ տալ բոլոր այն անձանց, ովքեր վկա են ճանաչվել, իսկ 1972 թվականի հունիսի 9-ի դեկրետի 106-րդ հոդվածը օրենսդրական ակտի կամ կանոնի խախտումը որակում է որպես վարչական իրավախախտում, անկախ այն հանգամանքից, արդյոք գործը քննող դատավորը իրավունք ունի տուգանել այն վկաներին, որոնք հրաժարվում են ցուցմունքներ տալ, թե ոչ:Դա իրավունք է տալիս եզրակացնել, որ պարոն Էգելինը, ով այսպիսով մերժեց բացատրության տալ առանց հիմնավորելու իր մերժումը, քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի կամ մասնագիտական գաղտնիքի պահպանության հիման վրա, կատարել է օրենքի խախտում և vis-a-vis անտեսել է քննությունը իրականացնող դատավորին, ինչն</p>

դատավորը, տարածքային դատախազի համաձայնության առկայության դեպում, կարող է չկիրառել տուգանքը մեղադրող կողմի ներկայացմամբ, :

Այս նույն տուգանքը կարող է մեղադրողի միջնորդության հիման վրա դրվել այն վկայի վրա, որը թեև ներկայացել է, սակայն հրաժարվել է երդվելուց և ցուցմունքներ տալուց...»:

	առաջացրել է կարգապահական խախտում: Վերաքննիչ դատարանն այսպիսով իր որոշումը հիմնավորեց օրենքով, և բողոքում բերված փաստարկները չհիմնավորվեցին...»:
--	---

Բ. Եվրոպական կոնվենցիայի հիման վրա բերված դիմումատուի գանգատը

1985 թվականի հոկտեմբերի 16-ին Հանձնաժողովին ուղղված իր դիմումում, պարոն Էգելինը հղում էր կատարում ՄԻԵԿ-ի 10-րդ և 11-րդ հոդվածների վրա: Նա պնդում էր, որ իր նկատմամբ կիրառված կարգապահական պատասխանատվությունը լրջորեն միջամտել էր իր արտահայտվելու ազատության և խաղաղ հավաքների ազատության իրավունքների իրականացմանը: Հանձնաժողովը դիմումի ընդունելիության մասին որոշում կայացրեց 1989 թվականի մարտի 13-ին: Իր 1989 թվականի դեկտեմբերի 14-ի զեկույցում (ներկայացված 31-րդ հոդվածի համաձայն) Հանձնաժողովը կարծիք արտահայտեց (15 ընդդեմ վեցի ձայների հարաբերությամբ), որ առկա է 11-րդ հոդվածի խախտում և միաձայն գտավ, որ 10-րդ հոդվածի մասով առանձին հարց չի ծագում:

Աղյուսակ 2-ը ներկայացնում է Եվրոպական դատարանում 1990 թվականի նոյեմբերի 21-ին և 1991 թվականի մարտի 18-ին կայացած լսումներում Դիմումատուի ներկայացրած գանգատը Եվրոպական կոնվենցիայի հիման վրա և Ֆրանսիայի կառավարության հակափաստարկները Դիմումատուի կողմից ներկայացված ենթադրյալ խախտումների կապակցությամբ:

Աղյուսակ 2.

Հոդվածները, պահանջները ենթադրաբար խախտվել են	որոնց	Դիմումատուի գանգատը	Ֆրանսիայի կառավարության հակափաստարկները
11-րդ հոդվածը, որը սահմանում է հետևյալը. «Հոդված 11. Հավաքների և միավորման ազատություն 1. Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների ազատության և այլոց հետ միավորվելու ազատության իրավունք՝ ներառյալ իր շահերի պաշտպանության համար արհմիություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը: 2. Այս իրավունքների իրականացումը ենթակա չէ որևէ սահմանափակման, բացի նրանցից, որոնք		Դիմումատուն գտնում էր, որ Բասսե-Տերեյի վերաքննիչ դատարանի կողմից իր նկատմամբ նշանակված կարգապահական պատասխանատվությունը անհամատեղելի էր ՄԻԵԿ-ի 10-րդ և 11-րդ հոդվածներով պաշտպանվող ազատ արտահայտվելու և խաղաղ հավաքների ազատության իր իրավունքների իրականացման հետ:	Ֆրանսիայի կառավարությունն իր գրավոր հուշագրում խնդրեց վճռել, որ 11-րդ հոդվածի խախտում առկա չէ:

<p>նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը կամ այլ անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով: Սույն հոդվածը չի խոչընդոտում օրինական սահմանափակումներ նախատեսել զինված ուժերի, ոստիկանության և պետական վարչակազմի մեջ մտնող անձանց կողմից այդ իրավունքների իրականացման նկատմամբ»:</p>		
<p>10-րդ հոդվածը, որը սահմանում է հետևյալը. «Հոդված 10. Արտահայտվելու ազատություն 1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում:</p>	<p>Դիմումատուն գտնում էր, որ Բասսե-Տերեյի վերաքննիչ դատարանի կողմից իր նկատմամբ նշանակված կարգապահական պատասխանատվությունը անհամատեղելի էր ՄԻԵԿ-ի 10-րդ և 11-րդ հոդվածներով պաշտպանվող ազատ արտահայտվելու և խաղաղ հավաքների ազատության իր իրավունքների իրականացման հետ:</p>	<p>Ֆրանսիայի կառավարությունը հաստատեց Հանձնաժողովի կարծիքը, որ 10-րդ հոդվածի մասով առանձին հարցեր չեն ծագում:</p>

<p>2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:»</p>		
--	--	--

Գ. Եվրոպական դատարանի վճիռը

Աղյուսակ 3-ում ներկայացված են Հանձնաժողովի և Եվրոպական դատարանի առջև Դիմումատուի ներկայացրած բողոքները, Ֆրանսիայի կառավարության կողմից բանավոր հնչեցված և գրավոր հուշագրում ներկայացված առարկությունները, ինչպես նաև Դիմումատուի կողմից նշված հողվածների ենթադրյալ խախտման վերաբերյալ Հանձնաժողովի եզրակացությունը և Եվրոպական դատարանի վճիռը՝ ՄԻԵԿ-ի 10-րդ և 11-րդ հոդվածներով երաշխավորված իր իրավունքների ենթադրյալ խախտումների վերաբերյալ Դիմումատուի գանգատի կապակցությամբ Եվրոպական դատարանի հիմնավորումների ընդգծմամբ:

Աղյուսակ 3

ՕՐԵՆՔՆ			
Դիմումատուի գանգատը	Ֆրանսիայի կառավարության առարկությունները	Եվրոպական Հանձնաժողովի դիրքորոշումը	Եվրոպական դատարանի վճիռը
<p>Դիմումատուն գտնում էր, որ Բասսե-Տերեյի վերաքննիչ դատարանի կողմից իր նկատմամբ կիրառված կարգապահական պատասխանատվությունն անհամատեղելի էր ՄԻԵԿ-ի 10-րդ և 11-րդ հոդվածներով երաշխավորվող արտահայտվելու ազատության և խաղաղ հավաքների ազատության իրավունքների իրականացման հետ:</p>	<p>Կառավարությունը նշել էր, որ պարոն Էգելինի նկատմամբ կիրառված այս սանկցիան նպատակ ուներ նաև պատժել նրան քննություն իրականացնող դատավորին ցուցմունքներ տալ մերժելու համար: Ըստ Կառավարության, Դիմումատուն իրականում պատասխանատվության էր ենթարկվել ինչպես «հանրահավաքի մասնակիցների վիրավորական ու զրպարտական գործողություններին» անհամաձայնություն չհայտնելու, այնպես էլ նրանցից իրեն չառանձնացնելու նպատակով երթին իր մասնակցությունը չդադարեցնելու և ցուցմունքներ տալուց հրաժարվելու համար, չնայած նա չէր վիճարկել Քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածը կամ մասնագիտական գաղտնիքը: Կառավարությունը</p>	<p>Հանձնաժողովը նշում էր, որ միակ խնդիրը կայանում է ոչ թե քննությունն անցկացնող դատավորին ցուցմունքներ տալուց հրաժարվելու, այլ հանրահավաքին Դիմումատուի մասնակցության մեջ:</p>	<p>Դիմումատուն, իրականում, պատասխանատվության էր ենթարկվել ոչ թե «հանրահավաքի մասնակիցների վիրավորական ու զրպարտական գործողություններին» անհամաձայնություն չհայտնելու, ոչ նրանցից իրեն առանձնացնելու նպատակով երթին իր մասնակցությունը չդադարեցնելու և ոչ էլ ցուցմունքներ տալուց հրաժարվելու համար, չնայած նա չէր վիճարկել Քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածը կամ մասնագիտական գաղտնիքը: Այնուամենայնիվ, <u>նա գործը վարող դատավորի կողմից կանչվել էր հանրահավաքին մասնակցելու պատճառով</u>: Ցուցմունքներ տալուց հրաժարվելու խնդիրը, որն ինքնին 10-րդ և 11-րդ հոդվածների շրջանակ մեջ չի մտնում,</p>

	<p>քննադատում էր Հանձնաժողովին այն կարծիքի համար, թե միակ խնդիրը կայանում էր հանրահավաքին Դիմումատուի մասնակցության մեջ:</p>		<p>Երկրորդական նշանակություն ունի: Բացի դրանից, պետք է նշել, որ պարոն Էգելին գործը վարող դատավորի ներկայությամբ կատարյալ լռություն չի պահպանել. <u>նա նշել է որ խնդրի հետ կապված ոչինչ չունի ասելու</u> և դատավորը պատշաճ չի համարել կիրառել Քրեական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 3-րդ մասով իրեն վերապահված իրավասությունը:</p>
<p>10-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱՆՏՈՒՄ - 10-ՐԴ ՀՈԴՎԱԾ ԱՐՏԱՀԱՅՏՎԵԼՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ</p>			
<p>Դիմումատուն պնդում էր, որ ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածով երաշխավորված իր իրավունքներն ու ազատությունները խախտվել են:</p>	<p>Ֆրանսիայի կառավարությունը հաստատեց Հանձնաժողովի այն տեսակետը, որ 10-րդ հոդվածի մասով առանձին հարց չի ծագում:</p>	<p>Հանձնաժողովն իր 1989 թվականի դեկտեմբերի 14-ի որոշմամբ միաձայն կարծիք արտահայտեց, որ տվյալ գործի փաստական հանգամանքներում 10-րդ հոդվածի մասով առանձին հարց չի ծագում:</p>	<p>Տվյալ գործում սույն նորմը (10-րդ հոդվածի մասով դիմումատու գանգատը) 11-րդ հոդվածի նկատմամբ պետք է դիտարկվի որպես <i>lex generalis</i>⁶, <i>a lex specialis</i>⁷, հետևաբար անհրաժեշտություն չկա այն դիտարկել</p>

⁶ **Lex Generalis**—Ընդհանուր կիրառում ունեցող իրավական նորմ, ի տարբերություն անհատական այն նորմերի, որոնք տարածվում են միայն կոնկրետ անձանց կամ մարդկանց փոքր խմբերի վրա. Bryan A. Garner, Editor in Chief, Black's Law Dictionary, seventh edition, West Group, ST. PAUL, MINN., 1999.

⁷ **Lex specialis derogat generali** – Ընդհանուր նորմի նկատմամբ գերակայություն ունեցող հատուկ նորմ: Երկու դեպքում կիրառվում է թեստ, առաջին՝ երբ ինչպես սովորույթային այնպես էլ պայմանագրային իրավունքի աղբյուրները առկա են, և երկրորդ՝ երբ այս երկու աղբյուրները չեն կարող մեկնաբանվել միասին վերցրած: Bryan A. Garner, Editor in Chief, Black's Law Dictionary, seventh edition, West Group, ST. PAUL, MINN., 1999.

			առանձին: Այս հարցում դատարանը համաձայնվել է Հանձնաժողովի հետ:
11-րդ ՀՈՂՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱՆՏՈՒՄԸ- 11-րդ ՀՈՂՎԱԾ ՀԱՎԱՔՆԵՐԻ և ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՋԱՏՈՒԹՅՈՒՆ			
Դիմումատուն անդում էր, որ ՄԻԵԿ-ի 11-րդ հոդվածով երաշխավորված իր իրավունքներն ու ազատությունները, մասնավորապես հավաքների ազատությունը, խախտվել են:	Ֆրանսիայի կառավարությունն իր գրավոր հուշագրում խնդրեց վճռել, որ 11-րդ հոդվածի խախտում առկա չէ:	Հանձնաժողովն իր 1989 թվականի դեկտեմբերի 14-ի որոշմամբ (տասնհինգն ընդդեմ վեցի ձայների հարաբերակցությամ բ) կարծիք արտահայտեց (31- րդ հոդվածի համաձայն), որ առկա է 11-րդ հոդվածի խախտում:	Չնայած իր անկախ դերին և կիրառման առանձին ոլորտին, սույն գործով <u>11-րդ հոդվածը նույնպես պետք է դիտարկվի 10-րդ հոդվածի լուսի ներքո:</u> 10-րդ հոդվածով երաշխավորված մասնագիտական կարծիքի պաշտպանությունը հանդիսանում է խաղաղ հավաքների նպատակներից մեկը, ինչպես և նախատեսված է 11- րդ հոդվածով:
ԱՐԴՅՈՔ ԱՌԿԱ Է ՄԻՋԱՏՈՒԹՅՈՒՆ ԽԱՂԱՂ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱՋԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՎԱՆՍՄԱՆԸ			
Դիմումատուն գտնում էր, որ Բասսե-Տերեյի վերաքննիչ դատարանի կողմից իր նկատմամբ կիրառված կարգապահական սանկցիան անհամատեղելի է իր արտահայտվելու ազատության և խաղաղ հավաքների ազատության հետ, որոնք պաշտպանված են Կոնվենցիայի 10- րդ և 11-րդ հոդվածներով:	Կառավարության անդամը, պարոն Էգելինի արտահայտվելու ու խաղաղ հավաքների ազատության իրավունքի իրականացմանը որևէ միջամտություն տեղի չի ունեցել. նա հնարավորություն է ունեցել առանց խոչընդոտի մասնակցել երթին և հրապարակայնորեն արտահայտել իր համոզմունքները՝ իր մասնագիտական կարգավիճակին ու ցանկությանը համապատասխան: Նա	Հանձնաժողովը գտավ, որ խնդիրը կայանում էր միայն հանրահավաքին Դիմումատուի մասնակցության, և ոչ քննությունն իրականացնող դատավորին ցուցմունքներ տալուց հրաժարվելու համար պարոն Էգելինին պատասխանատվու թյան ենթարկելու մեջ:	Դատարանը չընդունեց այս պնդումը: 11-րդ և 10- րդ հոդվածների 2-րդ մասերում նշված «սահմանափակում» հասկացությունը չի կարող մեկնաբանվել այնպես, թե այն չի ներառում այնպիսի միջոցներ, ինչպիսին է կարգապահական պատասխանատվու թյունը, որը կիրառվել է ոչ թե հավաքից առաջ կամ դրա ընթացքում, այլ դրանից հետո:

	<p>կարգապահական պատասխանատվության էր ենթարկվել միայն դեպքը տեղի ունենալուց հետո՝ հաշվի առնելով նրա վարքագիծը, որը նրա մասնագիտական պարտականություններին անհամապատասխան էր դիտվել:</p>		
	<p>Երկրորդ, Կառավարությունը նշեց, որ չնայած պարոն էգելինի վարքագծի ու մտադրությունների խաղաղ բնույթին, նրա նկատմամբ կիրառված պատասխանատվության միջոցը, չի միջամտել նրա խաղաղ հավաքների ազատության իրավունքի իրականացմանը, քանի որ հանրահավաքն արդեն ավարտվել էր:</p>	<p>Հանձնաժողովի կարծիքով, դիմումատուին չեն կարող վերագրվել որևէ ոչ խաղաղ մտադրություններ:</p>	<p>... Ոչ Բասսե-Տերեյի ոստիկանության Գլխավոր ոստիկանապետի զեկույցները, և ոչ էլ որևէ այլ ապացույց, չեն վկայում այն մասին, որ պարոն էգելինն անձամբ սպառնալիքներ է հնչեցրել կամ նկարներ և գրառումներ արել: <u>Ուստի Դատարանը գտնում է, որ այդ փուլում առկա էր միջամտություն դիմումատուի՝ խաղաղ հավաքների ազատության իրավունքի իրականացմանը:</u> Հետևաբար պետք է որոշել, արդյոք կիրառված պատասխանատվության միջոցը «նախատեսված է եղել օրենքով», հետապնդել է 11-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավաչափ նպատակներից մեկը կամ մի քանիսը, և դրանց հասնելը</p>

			«անհրաժեշտ է եղել ժողովրդական հասարակությունում»:
ԱՐԴՅՈՔ ՄԻՋԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ «ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԷՐ ՕՐԵՆՔՈՎ»			
<p>Դիմումատուն անդեց, որ 1972 թվականի հունիսի 9-ի Դեկրետի 106-րդ հոդվածը նպատակ չի ունեցել սահմանափակել փաստաբանների հավաքների ազատության իրավունքը, ավելին, «... ողջախոհության շրջանակների խախտում» բառերի բնույթը անհնար էր դարձնում կանխատեսել խախտման առաջացումը և թույլ էր տալիս ցանկացած պատասխանատվության միջոցի կիրառում կոնկրետ դեպքից հետո:</p>	<p>Ի հակադրություն Կառավարությունը նշեց, որ այս դրույթը «դատարանի ծառայողներ» հանդիսացող փաստաբաններից (<i>auxiliaires de la justice</i>), պահանջում է հարգել իրավական ու էթիկական բնույթ ունեցող մի շարք մասնագիտական սկզբունքներ: Այս դրույթը բավարար հստակություն ուներ, որտեղ պատժվող արարքը հակադրվում էր մասնագիտական կանոններին, ինչպես տվյալ գործում:</p>		<p>Դատարանի վճիռների համաձայն, նորմը չի կարող համարվել օրենք, քանի դեռ այն չի ձևակերպված բավարար հստակությամբ, որպեսզի քաղաքացիները անհրաժեշտության դեպքում հնարավորություն ունենան հանգամանքների ողջամիտ իրականացմամբ կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող են առաջացնել տվյալ գործողությունը... Սույն գործով վիճարկվող սանկցիայի իրավական հիմքում ընկած են միայն փաստաբանների մասնագիտական գործունեության հետ կապված հարաբերությունները կարգավորող հատուկ կանոնները: 1972 թվականի հունիսի 9-ի համապատասխան Դեկրետի 106-րդ հոդվածը որ միանշանակորեն սահմանում է, որ յուրաքանչյուր փաստաբան, նույնիսկ իր մասնագիտական</p>

			գործունեությունից դուրս, ունի հատուկ պարտավորություններ և Վճռաբեկ դատարանը վճռել էր, որ դրանք ներառում են նաև հարգանքը դատական իշխանությունների նկատմամբ: <u>Հետևաբար միջամտությունը «նախատեսված է եղել օրենքով»:</u>
--	--	--	--

ԱՐԴՅՈՔ ՄԻՋԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ ԷՐ ԻՐԱՎԱԶԱԹ ՆՊԱՏԱԿ

Դիմումատուն անդում էր, որ սանկցիան չէր հետապնդում <u>իրավաչափ նպատակ</u> , դրա արդյունքում կանխվել է նրա կողմից իր գաղափարների ու արհմիութենական պահանջների արտահայտումը:	Կառավարությունը նշեց, որ դրա նպատակը <u>«անկարգությունները կանխելն»</u> է եղել:	Հանձնաժողովը նշեց, որ իշխանությունների նման վարքագիծը պայմանավորված էր այն փաստով, որ դիմումատուն, որպես փաստաբան, հավանության էր արժանացրել և ակտիվորեն աջակցել էր նման արարքների:	Դատարանը նշեց, որ փաստերից ակնհայտ է, որ պարոն էզելին պատասխանատվության է ենթարկվել քանի որ չի <u>առանձնացրել իրեն հանրահավաքի ընթացքում տեղ գտած անօրինական միջադեպերից:</u> Հետևաբար միջամտությունը հետապնդում էր <u>«անկարգությունները կանխելու»</u> իրավաչափ նպատակ:
---	---	---	--

ԱՆՀՐԱԺԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Դիմումատուի անդամք, միջամտությունը, որի դեմ ինքը բողոքում է «անհրաժեշտ չէր ժողովրդավարական հասարակությունում»: Պահանջել, որպեսզի ինքը լքի երթը՝ հանրահավաքի	Կառավարությունը մյուս կողմից անդեց, որ վիճարկվող միջոցը իսկապես համապատասխանում էր առկա «սոցիալական սուր պահանջին», մասնավորապես նկատի ունենալով պարոն էզելինի կարգավիճակը՝ որպես փաստաբան	Հանձնաժողովը սահմանեց, որ պարոն էզելինի վարքագծի հնարավոր արդյունք հանդիսացող տպավորության հիման վրա կիրառված կարգապահական պատասխանատվությունը համատեղելի չէր «սուր	Դատարանը կարգապահական պատասխանատվության հարցը քննարկեց գործի, որպես մի ամբողջություն, լույսի ներքո, որոշելու համար մասնավորապես, արդյոք դա համաչափ էր հետապնդվող
---	--	---	--

<p>այլ մասնակիցների կողմից կատարված արարքներին իր անհամաձայնությունը հայտնելու նպատակով, նշանակում է իրեն գրկել խաղաղ հավաքների ազատության իր իրավունքից:</p>	<p>և տեղական առանձնահատկությունները: Անհամաձայնություն չհայտնելով հանրահավաքի ընթացքում կատարված անօրինական միջադեպերին, դիմումատուն ipso facto հաստատում էր դրանք: Բացի այդ, Կառավարությունը պնդում էին, որ դատական մարմինների համար էական նշանակություն ունեցող արձագանքել, «դատարանի ծառայողի» (auxiliaire de la justice) այնպիսի վարքագծին, որը լրջորեն վնասում է արդարադատության հեղինակությանը և դատարանի որոշումների նկատմամբ հարգանքին: Վերջապես, այն երկու մասնագիտական պարտականությունների խախտման ծանրությունն, ինչում մեղադրվում էր դիմումատուն, արդարացնում էր նրա նկատմամբ կիրառված թեթև սանկցիան և նշանակված պատիժը, որը չէր խախտում Դատարանի վճիռներում սահմանված</p>	<p>սոցիալական պահանջի» խիստ չափանիշի հետև և հետևաբար չի կարող համարվել «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում »:</p>	<p>իրավաչափ նպատակին, հաշվի առնելով այս պարագայում սերտորեն առնչվող խաղաղ հավաքների ազատության և արտահայտվելու ազատության իրավունքների հատուկ կարևորությունը: Համաչափության սկզբունքը պահանջում է, որ արդարացի հավասարակշռություն ապահովվի 11-րդ հոդվածի 2-րդ մասով թվարկված իրավաչափ նպատակների և փողոցում կամ հասարակական այլ վայրերում հավաքված մարդկանց կողմից իրենց կարծիքները բառերով, ժեստերով կամ նույնիսկ լռությամբ արտահայտելու միջև: Հավասարակշռության ձգտումը չի կարող արդյունքում հանգեցնել նրան, որ նման դեպքերում, <u>փաստաբանները, վախենալով կարգապահական պատասխանատվությունից, խուսափեն իրենց համոզմունքներն արտահայտելուց:</u> Ակնհայտ է, որ պարոն Էգելինի նկատմամբ նշանակվել էր 1972 թվականի հունիսի 9-</p>
---	---	--	--

	<p>համաչափության սկզբունքը:</p>	<p>ի Դեկրետի 107-րդ հոդվածով նախատեսված առավել մեղմ պատասխանատվության միջոցը. այն հիմնականում բարոյական ազդեցություն ուներ, քանի որ նրա փաստաբանական գործունեությամբ զբաղվելու կամ Փաստաբանների խորհրդի անդամության հարցում որևէ արգելք, անգամ ժամանակավոր, չէր առաջացնում:</p> <p>Այնուամենայնիվ, Դատարանը որոշեց, որ չարգելված խաղաղ հավաքին, տվյալ դեպքում հանրահավաքին, մասնակցելու անձի ազատությունը այնքան կարևոր է, որ այն չի կարող սահմանափակվել որևէ կերպ, նույնիսկ փաստաբանի համար, <u>քանի դեռ նա անձամբ որևէ անօրինական արարք չի կատարել:</u></p> <p>Կարճ ասած, նույնիսկ կիրառված նվազագույն պատասխանատվության միջոցը չի կարող <u>դիտվել «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում»:</u> Հետևաբար դա հակասում է 11-րդ հոդվածին:</p>
--	---------------------------------	--

Աղյուսակ 4

ԵՆԹԱԴՐԱԲԱՐ ԽԱՆՏՎԱԾ ՀՈՂՎԱԾՆԵՐԸ	ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՐԾԻՔԸ	ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՈՆ
ՄԻԵԿ-ի 10-րդ հողված	ՄԻԵԿ-ի 10-րդ հողվածի մասով առանձին հարց չի ծագում (միաձայն):	ՄԻԵԿ-ի 10-րդ հողվածի մասով գործի առանձին քննություն անցկացնելու անհրաժեշտություն չկա (միաձայն):
ՄԻԵԿ-ի 11-րդ հողված	Առկա է խախտում (ձայների տասնհինգը վեցի հարաբերակցությամբ)	Առկա է խախտում (ձայների վեցը երեքի հարաբերակցությամբ)
Դիմումատուն պահանջում էր 25,000 \$րանսիական \$րանկ ոչ նյութական վնասի համար	Պետք է տրամադրվի փոխհատուցում (սակայն չափը չառաջարկվեց)	Վճիռն ինքնին սահմանում է հնարավոր բարոյական վնասի արդարացի փոխհատուցում: 40,000 \$րանսիական \$րանկ պետք է փոխհատուցվի Դիմումատուին ծախսերի և ծախքերի համար:

Դատավոր Ռիստղալի տարբերվող կարծիքը հիմնականում կայանում էր ՄԻԵԿ-ի 11-րդ հողվածի խախտումը բացառելու մեջ, քանի որ ըստ դատավորի կիրառված սանկցիան ամենաթեթև կարգապահական սանկցիաներից էր, չէր սահմանափակում Դիմումատուի կողմից փաստաբանությամբ զբաղվելը շարունակելուն և դուրս չէր գալիս հայեցողության սահմաններից:

Դատավոր Մաթչերի տարբերվող կարծիքը հիմնականում վերաբերում էր նրան, որ Դիմումատուի նկատմամբ կիրառված սանկցիան նվազագույնն էր և համաչափ էր փաստաբանի մասնագիտական կանոն հանդիսացող «ողջախոհություն» ցուցաբերելու իր պարտականության կոպիտ խախտմանը: Հետևաբար, կիրառված կարգապահական սանկցիան «անհրաժեշտ էր ժողովրդավարական հասարակությունում»:

Դատավոր Պետտիտի մասնակի տարբերվող կարծիքը վերաբերում էր նրան, որ

ա) հստակ չէ այն, որ միջոցառումից հետո կիրառված նվազագույն, սոսկ բարոյական, սանկցիան խոչընդոտ առաջացրեց հանրահավաք անցկացնելու ազատության իրավունքի իրականացման համար,

բ) Դատարանն իր հիմնավորումներում բավարար ուշադրության չի արժանացրել հայեցողության սահմանների/համաչափության տեսանկյունից ներպետական իրավունքի նորմերի՝ Կոնվենցիային համատեղելիության հարցին և,

գ) արդյո՞ք սույն գործը տալիս էր հանրահավաք անցկացնելու իրավունքին վերագրվող կարևորության սկզբունքի արտահայտման պատշաճ առիթ:

Դատավոր Ղե Մեյերի համընկնող կարծիքի համաձայն մասնակցելով հանրահավաքին Դիմումատուն իրականացրել է և իր արտահայտվելու և՛ հավաքների ազատությունները: Այդ երկուսից մեկի իրականացումն

ուղղակիորեն կախված էր մյուսի իրականացումից: Վճռում նշված հիմնավորումը ցույց է տալիս, որ խախտվել են ինչպես ազատ արտահայտվելու, այնպես էլ հավաքների ազատության իրավունքները:

ՄԱՍ 2-- ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃՌԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Խաղաղ հավաքների ազատության իրավունքը համարվում է ժողովրդավարական հասարակության հիմնարար իրավունքներից մեկը, և ինչպես և արտահայտվելու ազատության իրավունքը, մնան հասարակության հիմնաքարերից է: Այն նաև երկրի քաղաքական ու սոցիալական կյանքի, քաղաքական կուսակցությունների գործունեության էական բաղադրիչն է⁸:

Կոնվենցիայի 8-ից 10-րդ հոդվածների կառուցվածքը թույլ է տալիս դրանցով երաշխավորված իրավունքների սահմանափակումներ. Ստրասբուրգի մարմինները հետևյալ թեստ են կիրառում այն դեպքերի համար, երբ 8-ից 10-րդ հոդվածների ենթադրյալ խախտումներ են քննարկվում.

ա) արդյո՞ք տվյալ դեպքի համար կիրառելի է տվյալ հոդվածը,

բ) երկրորդ, առկա է միջամտություն վիճարկվող իրավունքի իրականացմանը,

գ) եթե առկա է միջամտություն, ապա արդյո՞ք դա օրենքին համապատասխան⁹ կամ օրենքով նախատեսված¹⁰ կարգով է իրականացվել, հետապնդել է 8-ից 10-րդ հոդվածներով նախատեսված մեկ կամ մեկից ավելի իրավաչափ նպատակ և վերջապես,

դ) անհրաժեշտ էր միջամտությունը ժողովրդավարական հասարակությունում:

Էզելինն ընդդեմ Ֆրանսիայի գործով Եվրոպական դատարանի վճռի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Եվրոպական հանձնաժողովը և Եվրոպական դատարանը 10-րդ և 11-րդ հոդվածների ենթադրյալ խախտումների քննության ընթացքում կիրառել է վերը նշված թեստը:

1. Արդյո՞ք ՄԻԵԿ-ի 10-րդ և 11-րդ հոդվածները կիրառելի են

Այս թեստի կիրառման ընթացքում Հանձնաժողովն ու Դատարանը 10-րդ և 11-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների շրջանակները դիտարկել են քննվող գործի փաստերի լույսի ներքո: Եվրոպական հանձնաժողովի որոշումների և Եվրոպական դատարանի վճիռների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հավաքների ազատության իրավունքը լայն է մեկնաբանվում: Էզելինն ընդդեմ Ֆրանսիայի գործով և Եվրոպական հանձնաժողովը¹¹ և Եվրոպական դատարանը¹² որոշեցին, որ 10-րդ հոդվածն առանձին դիտարկվելու անհրաժեշտությունը չկա: Հատկանշական է, որ Դատարանը տվյալ գործում նաև ընդգծել է 10-րդ և 11-րդ հոդվածների միջև սերտ կապը (վճռի 51-րդ կետ) և վճռի 37-րդ կետում հստակորեն սահմանել է.

⁸ Տե՛ս «Մարդու իրավունքները և ոստիկանությունը» Գործնական ուղղվածություն ունեցող ուսուցման ձեռնարկ, Դատական մարմինների որոշումներ և վճիռներ, հավելված Ա, Եվրոպայի Խորհուրդ, Ստրասբուրգ 1998թ. սեպտեմբերի 1 ՇԸ (98) 1:

⁹ Տե՛ս ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածի 2-րդ մասը:

¹⁰ Տե՛ս ՄԻԵԿ-ի 9-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների երկրորդ մասերը:

¹¹ Տե՛ս Էզելինն ընդդեմ Ֆրանսիայի (Ezelin v. France) գործով Եվրոպական դատարանի 1991թ. մարտի 18-ի վճիռը, մաս 29:

¹² Տե՛ս նույն տեղում՝ մաս 35:

Չնայած իր ինքնուրույն դերին և կիրառության առանձին ոլորտին, այս գործով, 11-րդ հոդվածը ևս պետք է դիտարկել 10-րդ հոդվածի լույսի ներքո (Յանգի Ջեյմսի և Վեբսթերի դատավարությունը 13.08.1981 շարք A համար 44. կետ 23 կետ 57): 10-րդ հոդվածով երաշխավորված անձնական կարծիքի պաշտպանությունը խաղաղ հավաքների ազատության տարրերից մեկն է, ինչպես և նախատեսված է 11-րդ հոդվածով:

Սակայն, Եվրոպական հանձնաժողովը և Եվրոպական դատարանը որոշեցին, որ ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի մասով առանձին քննություն իրականացնելու անհրաժեշտությունը չկա: Այդ առումով կարևոր է նշել Դատավոր դե Մեյերի համընկնող կարծիքը, որտեղ նա մասնավորապես նշում է.

Ես լիովին ընդունում եմ, որ «10-րդ հոդվածի հետ կապված առանձին քննություն անցկացնելու» անհրաժեշտություն չկար: Բայց իմ կարծիքով, դա պետք է նշանակեր, որ անհրաժեշտ է ոչ թե քննարկել միայն 11-րդ հոդվածը, նույնիսկ եթե դիտարկում ենք այդ հոդվածը «10-րդ հոդվածի լույսի ներքո», այլ ավելի շուտ քննարկել երկու հոդվածները (10-ը և 11-րդը) միասին:

Մասնակցելով հանրահավաքին, դիմումատուն, փաստորեն, իրականացրել է ազատ արտահայտվելու և հավաքների ազատության իր իրավունքները և այն վարքագիծը, որի համար նա քննադատվում էր, ներառվում էր ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ իրավունքների շրջանակներում: Այս դեպքում երկու իրավունքներն էլ ավելի քան «փոխկապակցված էին». դրանցից մեկի իրականացումն ուղղակիորեն կախված էր մյուսի իրականացումից:

Իմ կարծիքով, վճռում նշված հիմնավորումները ցույց են տալիս, որ խախտվել են ինչպես ազատ արտահայտվելու, այնպես էլ հավաքների ազատության իրավունքները¹³:

Դատարանի վճիռների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հավաքների և միավորումների ազատությունը սերտորեն կապված է ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածով երաշխավորված արտահայտվելու ազատության հետ: Սա բացատրվում է այն հանգամանքով, որ կարծիքները, գաղափարները, համոզմունքները և մտքերն արտահայտելու ամենաարդյունավետ եղանակներից մեկը հավաքն ու միավորումն է: Այս դրույթը հստակորեն մատնանշված է Յանգը, Ջեյմսը և Վեբսթերն ընդդեմ Միացյալ Թագավորության գործում, որտեղ դատարանը ուղղակիորեն սահմանել է.

Ավելի, չնայած իր անկախ դերին և կիրառման առանձին ոլորտին, 11-րդ հոդվածը, սույն գործով, ևս պետք է դիտարկվի 9-րդ և 10-րդ հոդվածների լույսի ներքո: (տես, *mutatis mutandis*, Կյելդսենի, Բուսկ Մադսենի և Պեդերսենի գործով (Kjeldsen, Busk Madsen and Pedersen) գործով դատարանի 1976թ. դեկտեմբերի 7-ի վճիռը, Շարք A թիվ. 23, էջ. 26, կետ 52)¹⁴.

9-րդ և 10-րդ հոդվածներով երաշխավորված անձնական կարծիքի պաշտպանությունը, որը դրսևորվում է մտքի, խղճի, կրոնի և արտահայտվելու

¹³ Տե՛ս նույն տեղում՝ Դատավոր Դե Մեյերի համընկնող կարծիքը:

¹⁴ Տե՛ս Յանգը, Ջեյմսն ու Վեբսթերը ընդդեմ Միացյալ Թագավորության (Young, James and Webster v. UK) գործով Եվրոպական դատարանի 1982 թ. վճիռը, մաս 57:

ազատությամբ, 11-րդ հոդվածով երաշխավորված հավաքների ազատության նպատակներից մեկն է: Հետևաբար, այն այս հոդվածի (11-րդ հոդված) հիմքն է հանդիսանում ...¹⁵

«*lex specialis*» սկզբունքը իրավունքի լայնորեն ընդունված ընդհանուր սկզբունք է: *Lex specialis*-ը միջազգային իրավունքում ունի կիրառման երկու եղանակ. մի դեպքում դա ընդհանուր իրավունքի, իսկ մյուս դեպքում որպես ընդհանուր իրավունքից բացառության կիրառումն է: *Lex specialis* կանոնի հիմնական նպատակը որոշելն է, թե որ նորմը պետք է կիրառվի: Եթե *lex specialis*-ը ներառում է վեճերի լուծման վերաբերյալ դրույթներ, ինչը կիրառելի է դրա բովանդակության նկատմամբ, ապա *lex specialis*-ը գերակայում է *lex generalis*-ով¹⁶ սահմանված վեճերի լուծման վերաբերյալ ցանկացած նորմերի նկատմամբ:

Lex specialis կանոնի կիրառման բարդություններից մեկը կայանում է ընդհանուր և հատուկ նորմերի տարանջատման մեջ: Նորմերը «ընդհանուր» կամ «հատուկ» կարող են հանդիսանալ միայն այլ նորմերի նկատմամբ, այլ ոչ թե վերացականորեն: Նորմը կարող է ընդհանուր կամ հատուկ բնույթ ունենալ՝ կախված իրավահարաբերության օբյեկտի բնույթից կամ այն սուբյեկտներից, որոնք վարքագիծը պետք է այդ նորմը կարգավորի:¹⁷

Ինչ վերաբերում է դատավոր դե Մեյերի համընկնող կարծիքին կապված 10-րդ հոդվածն առանձին չդիտարկելու հետ, ապա 10-րդ և 11-րդ հոդվածների ենթադրյալ խախտումներին վերաբերող Եվրոպական դատարանի այլ վճիռների վերլուծությունը ցույց է տալիս, որ մի շարք գործերում դատարանը վերահաստատում է իր տեսակետն առաջին, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածով նախատեսված անձնական կարծիքի պաշտպանությունը Կոնվենցիայի 11-րդ հոդվածով սահմանված խաղաղ հավաքների ազատության նպատակներից մեկն է հանդիսանում¹⁸: Ջավիթ Անն ընդդեմ Թուրքիայի գործով, որում Դիմումատուն պնդում էր, որ Թուրքական և Թուրք-Կիպրոսական իշխանությունների կողմից հանրահավաքներին մասնակցելու նպատակով իրեն «կանաչ գիծը» հատելու թույլատվություն տալը մերժելը խոչընդոտել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված իր արտահայտվելու ազատության, ներառյալ կարծիքներ և գաղափարներ ունենալու, տեղեկություններ ստանալու և տարածելու ազատության իրավունքների իրականացմանը, Դատարանը սահմանեց, որ.

... Այսպիսով, նկատի ունենալով, որ Դիմումատուի մեղադրանքները վերաբերում են հիմնականում «TRNC» իշխանությունների կողմից «կանաչ գիծը» հատելու և Կիպրոսի հույներին հանդիպելու թույլտվություններ տալու ենթադրյալ մերժմանը, Դատարանը գտնում է, որ 11-րդ հոդվածը ձեռք է բերում նախապատվություն որպես *lex specialis* հավաքների համար, հետևաբար, հարցը 10-րդ հոդվածի մասով առանձին քննելու անհրաժեշտությունը չկա: Այնուամենայնիվ Դատարանը 11-րդ հոդվածը քննելիս ու մեկնաբանելիս նկատի կունենա 10-րդ հոդվածը:

¹⁵ Տե՛ս նույն տեղում:

¹⁶ Տե՛ս Հարավային բլուֆին թունայի գործով Ծովային իրավունքի միջազգային դատարանի 1999թ. օգոստոսի 27-ի վճիռը, մաս 123:

¹⁷ Տե՛ս օրինակ *lex specialis* կանոնի կիրառության և «Ավտոնոմ ռեժիմի» հարցը, հայնցակարգային ներածությունը, մաս 2, International Law Commission, Study Group on Fragmentation Koskenniemi.

¹⁸ Տե՛ս օրինակ Ջավիթ Անն ընդդեմ Թուրքիայի (Djavit An v. Turkey) գործով Եվրոպական դատարանի 2003 թվականի վճիռը, մաս 39:

Սեկ այլ, Ուիլսոնը, Լրագրողների ազգային միությունը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության, գործով որտեղ Դիմումատուները վիճարկում էին իրենց կարծիք ունենալու ազատության իրավունքի իրականացմանը միջամտությունը առ այն, որ գործառույթն այնքա՞ն է հնարավորություն ունենա ընտրել, արդյո՞ք ինքը ցանկանում է գործատուի հետ հարաբերություններում ներկայացված լինել արհեստակցական միության կողմից, Եվրոպական Դատարանը սահմանեց.

... Այնուամենայնիվ, Դատարանը չի գտնում, որ 10-րդ հոդվածի մասով ծագում են այնպիսի առանձին հարցեր, որոնք արդեն չեն դիտարկվել Կոնվենցիայի 11-րդ հոդվածի լույսի ներքո: Հետևաբար այս գանգատն առանձին քննելու անհրաժեշտությունը չկա¹⁹ :

Երկու վճիռներում էլ Դատարանը միաձայն վճռել է, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի մասով Դիմումատուի գանգատն առանձին քննելու անհրաժեշտությունը չկա:

Էզելինն ընդդեմ Ֆրանսիայի գործով Դատարանը նույնպես նշում է, որ «... չնայած իր ինքնուրույն դերին և կիրառության առանձին ոլորտին, [Էզելինն ընդդեմ Ֆրանսիայի գործով] 11-րդ հոդվածը ևս պետք է դիտարկվել 10-րդ հոդվածի լույսի ներքո» և վճռում է, որ ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի մասով առանձին քննություն անցկացնելու անհրաժեշտությունը չկա²⁰: Դատարանը նաև վճռում սահմանել է, որ տվյալ դեպքում խաղաղ հավաքների ազատությունը և արտահայտվելու ազատությունը սերտորեն կապված են:

Ուիլսոնը, Լրագրողների ազգային միությունը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճռի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ գործում դատարանը պարզորոշ սահմանել է, որ 10-րդ հոդվածի մասով որևէ առանձին հարց չի ծագում, որն արդեն չի դիտարկվել Կոնվենցիայի 11-րդ հոդվածի ենթատեքստում, և հետևաբար, 10-րդ հոդվածի խախտման վերաբերյալ Դիմումատուի գանգատն առանձին քննելու անհրաժեշտությունը չկա:

Ջավիթ Անն ընդդեմ Թուրքիայի գործով Դատարանը, 10-րդ հոդվածի մասով առանձին քննություն չանցկացնելու վերաբերյալ իր որոշումը հիմնավորեց այն հանգամանքով, որ Կոնվենցիայի 11-րդ հոդվածը ձեռք է բերում նախապատվություն որպես *lex specialis* հավաքների համար. այնուամենայնիվ Դատարանը միևնույն ժամանակ նշեց, որ 11-րդ հոդվածը քննելիս ու մեկնաբանելիս նկատի կունենա 10-րդ հոդվածը:

Հատկանշական է, որ Հանձնաժողովը Էզելինի գործով իր որոշման մեջ նշում է, որ *ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի մասով առանձին հարց չի ծագում*, այսինքն 10-րդ հոդվածի մասով չի ծագում որևէ հարց, որը չի դիտարկվել 11-րդ հոդվածի լույսի ներքո, մինչդեռ Դատարանի վճիռը սահմանում է, որ *ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի մասով առանձին քննություն անցկացնելու անհրաժեշտություն չկա, քանի որ այս դրույթը 11-րդ հոդվածի նկատմամբ պետք է դիտարկվի որպես *lex generalis*:*

¹⁹ Տե՛ս Ուիլսոնը, Լրագրողների ազգային միությունը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության (Wilson, National Union of Journalists and Others V. the United Kingdom) գործով Եվրոպական դատարանի 2002թ. վճիռը, մաս 50:

²⁰ Տե՛ս Էզելինն ընդդեմ Ֆրանսիայի (Ezeline v. France) գործով Եվրոպական դատարանի 1991թ. մարտի 18-ի վճիռը, մասն 37:

Դատարանի հիմնավորումները լայն մեկնաբանության տեղ են թողնում այն կապակցությամբ, թե արդյո՞ք Դատարանն առանձին է անդրադարձել արտահայտվելու ազատության իրավունքին, թե՞ այն դիտարկել է հավաքների ազատության իրավունքի խախտումը քննելիս: Այնուամենայնիվ, Դատարանը միաժամանակ նշում է, որ կիսում է Հանձնաժողովի կարծիքը: Վճռում Դատարանը նաև սահմանում է, որ *հավաքների ազատությունն ու արտահայտվելու ազատությունն այս պարագայում սերտորեն կապված են*, ինչը նաև իր արտահայտությունն է գտել Դատավոր Դե Մեյերի համընկնող կարծիքում, որտեղ Դատավորը հիշատակում է.

... Մասնակցելով հանրահավաքին, դիմումատուն, փաստորեն, իրականացրել է ազատ արտահայտվելու և հավաքների ազատության իր իրավունքները և այն վարքագիծը, որի համար նա քննադատվում էր, ներառվում էր ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ իրավունքների շրջանակներում²¹:

2. Եթե այո, ապա ա՞ռկա է արդյոք միջամտություն 11-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների ու ազատությունների իրականացմանը

Եվրոպական կոնվենցիայի 8-ից 11-րդ հոդվածներն նման կառուցվածք ունեն, այն է՝ հոդվածների առաջին մասը երաշխավորում է իրական իրավունքներն ու ազատությունները իսկ 8-ից 11-րդ հոդվածների երկրորդ մասերը սահմանում են այն իրավաչափ նպատակները, որոնց դեպքում արդարացվում է միջամտությունը այդ իրավունքների իրականացմանը:

Այդուսակ 3-ում ներառված են Ֆրանսիայի կառավարության փաստարկները և Եվրոպական հանձնաժողովի ու Դատարանի նկատառումները այս հարցի կապակցությամբ: Ֆրանսիայի կառավարությունը պնդում էր, որ Դիմումատուի հավաքների ազատության իրավունքի իրականացմանը որևէ միջամտություն տեղի չի ունեցել և իր այդ պնդումը հիմնավորում էր այն փաստով, որ Դիմումատուն հնարավորություն է ունեցել մասնակցել հանրահավաքին, արտահայտել է իր մտքերը և նա պատասխանատվության է ենթարկվել հանրահավաքի ավարտից հետո միայն:

Դատարանն այստեղ անդրադարձավ ՄԻԵԿ-ի 11-րդ հոդվածով սահմանված «սահմանափակում» հասկացության իմաստին, նշելով, որ «սահմանափակում» հասկացությունը ներառում է ինչպես հավաքից առաջ, դրա ընթացքում, այլ նաև հավաքից հետո կատարված միջամտությունը: Դատարանը այս հարցին 10-րդ հոդվածի ենթատեքստում անդրադարձել է նաև Հենդիսայդի գործով վճռում²²:

Եվրոպական Դատարանը նաև անդրադարձավ Ֆրանսիայի դատական մարմինների, մասնավորապես Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների վճիռների այն հիմնավորումներին, ըստ որոնց Դիմումատուն չէր արտահայտել իր անհամաձայնությունը այդ դեպքերի վերաբերյալ, չէր առանձնացրել իրեն այդ հանցավոր արարքներից, կամ չէր լքել երթը (Տե՛ս Այդուսակ 1-ը): Ակնհայտ է, որ նշված վճիռների հիմքում ընկած է եղել Դիմումատուի հավաքին և երթին մասնակցելու փաստը:

²¹ Տե՛ս նույն տեղում՝ Դատավոր Դե Մեյերի համընկնող կարծիքը:

²² Տե՛ս Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության (Handyside v. UK) գործով Եվրոպական դատարանի 1976թ. դեկտեմբերի 7-ի վճիռը, մաս 43:

Այսպիսով Եվրոպական դատարանը գտավ, որ տեղի է ունեցել միջամտություն Դիմումատուի խաղաղ հավաքների ազատության իրավունքի իրականացմանը:

3. Արդյո՞ք միջամտությունը հիմնավորված էր

Համաձայն Եվրոպական դատարանի կողմից մշակված թեստի, միջամտության առկայության հարցը քննելուց հետո դատարան անդրադառնում է միջամտության հիմնավորվածության գնահատման, այն է. արդյոք սահմանափակումը «նախատեսված էր օրենքով», արդյոք այն հետապնդում էր «իրավաչափ նպատակ» և արդյոք «անհրաժեշտ էր ժողովրդավարական հասարակությունում»:

ա Արդյո՞ք սահմանափակումը «նախատեսված էր օրենքով»

Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքների սահմանափակումների իրավական հիմքը պետք է հիմնավորվի: Այս խնդիրը ենթակա է կարգավորման Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների ներքին օրենդրությամբ սահմանված կարգով:

«Նախատեսված է օրենքով» հասկացությունը ներառված է Կոնվենցիայի 11-րդ հոդվածի 2-րդ կետում: Եվրոպական դատարանը մշակել է «նախատեսված է օրենքով» և «օրենքով սահմանված կարգով» հասկացությունների մեկնաբանման համար որոշակի չափանիշներ և սկզբունքներ: Այդ չափանիշներն ու սկզբունքները մասնավորապես ներառում են հետևյալ նվազագույն պահանջները.

ա. օրենքը պետք է ձևակերպված լինի պարզորոշ, որպեսզի նրանք, ում վրա ամենայն հավանականությամբ տարածվելու է տվյալ օրենքը, հնարավորություն ունենան հասկանալ այն և ըստ դրա կարգավորեն իրենց արարքները օրենքը խախտելուց խուսափելու համար: Սա կանխորոշելիության թեստն է:

բ. օրենքը պետք է լինի մատչելի և հասանելի:

Նշված սկզբունքները ավելի բազմակողմանիորեն ներկայացվել են Սանդի Թայմսի գործով վճռում, որտեղ Եվրոպական դատարանը սահմանել է.

....«օրենքով նախատեսված» արտահայտությունից բխում են հետևյալ երկու պահանջները. առաջին՝ օրենքը պետք է լինի միևնույն չափով մատչելի՝ քաղաքացիները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Երկրորդ՝ նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա քաղաքացիներին դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը, նա պետք է հնարավորություն ունենա, անհրաժեշտության դեպքում օգտվելով խորհուրդներից, հանգամանքների ողջամիտ իրականացմամբ կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող են առաջացնել տվյալ գործողությունը: Այդ հետևանքները պարտադիր չէ կանխատեսել բացարձակ հստակությամբ. փորձը ցույց է տալիս, որ դա անկարելի է: Ավելին, չնայած որոշակիությունը շատ ցանկալի է, այն կարող է ուղեկցվել քարացածության հատկանիշներով, այն դեպքում, երբ օրենքը պետք է օժտված լինի փոփոխվող

հանգամանքների հետ համընթաց գնալու ունակությամբ: Հետևաբար, շատ օրենքներում անխուսափելիորեն գործածվում են այնպիսի տերմիններ, որոնք ավելի կամ պակաս չափով անորոշ են. դրանց մեկնաբանումը և կիրառումը՝ պրակտիկայի խնդիր է²³:

Էզելինն ընդդեմ Ֆրանսիայի գործով Եվրոպական դատարանը կիրառեց վերը նշված թեստը և մասնավորապես ընդգծեց Դիմումատու բողոքները «ողջախոհության... խախտում» հասկացության բնույթի կապակցությամբ, ինչը, դիմումատուի պնդմամբ անհնարին էր դարձրել նախապես կանխատեսել խախտումը: Ի հակառակ դրան, Ֆրանսիայի կառավարությունը նշեց, որ վիճարկվող օրենքի նորմը բավարար հստակություն ուներ և որ պատշվող արարքի հիմքում մասնագիտական կանոնների խախտումն էր ընկած (Տե՛ս *Աղյուսակ 3-ը*): Դատարանը սակայն, կրկին հիշեցրեց նաև, որ փորձը ցույց է տալիս, որ հնարավոր չէ ապահովել բացարձակ հստակություն:

Դատարանը, անդրադառնալով կիրառված սանկցիայի իրավական հիմքին, նշեց, որ Էզելինի գործում դրանք փաստաբանների գործունեությունը կարգավորող հատուկ կանոններն են: 1972 թվականի հունիսի 9-ի համապատասխան Դեկրետի 106-րդ հոդվածը միանշանակորեն սահմանում է, որ յուրաքանչյուր փաստաբան, նույնիսկ իր մասնագիտական գործունեության շրջանակներից դուրս ունի հատուկ պարտականություններ, և Վճռաբեկ դատարանը որոշել էր, որ դրանք ներառում են դատական իշխանությունների նկատմամբ հարգանքը: *Եվրոպական դատարանը, հետևաբար, որոշեց, որ միջամտությունը «նախատեսված էր օրենքով»:*

բ. Արդյո՞ք միջամտությունը հետապնդել է իրավաչափ նպատակ.

Սահմանափակումը պետք է հետապնդի «**իրավաչափ նպատակ**» և պետք է համաչափ լինի այդ նպատակին: Եվրոպական դատարանի կողմից մշակված չափանիշների համաձայն, հավաքների ազատության իրավունքի սահմանափակման իրավական հիմքը հիմնավորելու համար պետությունները պետք է ապացուցեն, որ այն համաչափ է հետապնդվող նպատակին և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում: Որպեսզի հավաքների ազատության իրավունքի սահմանափակումը դիտվի որպես անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում, այն պետք է համապատասխանի հրատապ սոցիալական կարիքներին և համաչափ լինի հետապնդվող նպատակին:

«Համաչափության սկզբունքը»²⁴ կիրառվում է այն դեպքերում, երբ պետական մարմինները սահմանափակում են Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված հավաքների և միավորման ազատության, ինչպես նաև մի շարք այլ իրավունքներ և ազատություններ՝ ավելի բարձր նպատակի հասնելու համար:

²³ Տե՛ս Սանդի Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով (Sunday Times v. UK) Եվրոպական դատարանի 1979թ. մարտի 29-ի վճիռը, մաս 49:

²⁴ «Համաչափ» հասկացությունը չի օգտագործվում ո՛չ Եվրոպական կոնվենցիայի տեքստում ո՛չ էլ դրան կից արձանագրություններում, սակայն «Համաչափության սկզբունքը» Եվրոպական դատարանի կողմից սահմանված մոտեցումն է Կոնվենցիայիով երաշխավորված իրավունքների և ազատությունների պաշտպանությանը:

Պետական մարմինները պարտավորվում են Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված հողվածի նկատմամբ սահմանափակում կիրառելու դեպքում ապացուցել, որ կիրառված սահմանափակումները չեն գերազանցում տվյալ կոնկրետ նպատակին հասնելու համար անհրաժեշտ սահմանը՝ եթե նույնիսկ հստակ է այն հանգամանքը, որ կոնվենցիայով երաշխավորված հողվածների սահմանափակումը իրավաչափ նպատակ է հետապնդել²⁵:

Եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածի սահմանափակումները կհամապատասխանեն կոնվենցիային այն դեպքում միայն, եթե դրանց նպատակը կոնվենցիայի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված իրավունքների և շահերի պաշտպանությունն է: Այդ շահերը ներառում են հետևյալը՝

- պետական անվտանգությունը,
- հասարակության անվտանգությունը,
- անկարգությունների կամ հանցագործությունների կանխումը,
- առողջության կամ բարոյականության պաշտպանությունը,
- այլ անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը:

Եվրոպական հանձնաժողովի և Ղատարանի պրակտիկան ցույց է տալիս, որ այդ նպատակները նեղ են մեկնաբանվում:

Էզելինը պնդում էր, որ իր իրավունքների սահմանափակումը չէր հետապնդում իրավաչափ նպատակ: Ի հակառակ դրան, Ֆրանսիայի կառավարությունը հիմնավորում էր Ղիմումատուի իրավունքների սահմանափակումը՝ հղում կատարելով «անկարգությունները կանխելու» 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված իրավաչափ նպատակին:

Հանձնաժողովի դիտարկումների համաձայն, ինչպես նշված է Ադյուսակ 3-ում, Էզելինը պատասխանատվության է ենթարկվել քանի որ չի առանձնացրել իրեն հանրահավաքի ընթացքում տեղ գտած անօրինական միջադեպերից և Ֆրանսիայի իշխանություններն իրենց միջամտությունը հիմնավորվում են նրանով, որ Էզելինը, լինելով փաստաբան, հավանության է արժանացրել և ակտիվորեն աջակցել է այդ արարքներին:

Ղատարանն այդ իսկ նկատառումներով վճռեց, որ միջամտությունը հետապնդում էր «անկարգությունները կանխելու» իրավաչափ նպատակ, ինչին որ հղում էր կատարում Ֆրանսիայի կառավարությունը:

գ. Անհրաժեշտ է սահմանափակումը «ժողովրդավարական հասարակությունում»

«Անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» արտահայտությունը կոնվենցիայի 11-րդ հոդվածի 2-րդ կետով հստակորեն սահմանած է որպես հողվածի 1-ին կետով երաշխավորված իրավունքների իրականացման սահմանափակման հիմք: ՄԻԵԿ-ի բազմաթիվ մասնագետների, մասնավորապես ըստ Ստիվեն Գրեերի.

...«անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» արտահայտությունը անկասկած կոնվենցիայի ամենակարևոր նորմերից մեկն է, այն մասնավորապես, Ստրասբուրգյան մարմիններին տալիս է հնարավոր լայն հայեցողություն հաստատելու կամ հերքելու այն իրավունքների

²⁵ Տե՛ս օրինակ Բարտոլդն ընդդեմ Գերմանիայի (Barthold V. Germany) գործով Եվրոպական դատարանի 1984թ. հոկտեմբերի 25-ի վճիռը:

միջամտությունը, որոնք պետությունները պետք է հիմնավորեն հղում կատարելով 8-ից 11-րդ հոդվածների երկրորդ մասերով նախատեսված մեկ կամ մի քանի իրավաչափ նպատակներին: Ամենակարևոր և ամենադժվար խնդիրներից մեկը, որոնց Հանձնաժողովը և Դատարանը պետք է անդրադառնան, պաշտպանության միջոցի համոզիչ լինելու թեստի անցկացումն է, որպեսզի ապահովվի, որ այն համապատասխանում է ժողովրդավարության իրական շահերին և զուտ քաղաքական քողարկված նպատակահարմարություն չէ...²⁶

Եվրոպական դատարանը կոնկրետ սահմանափակման անհրաժեշտությունը ժողովրդավարական հասարակությունում դիտարկելիս կիրառում է իր կողմից մշակված որոշակի ստանդարտներ ու չափանիշներ: Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Դատարանը սահմանեց, որ

...«անհրաժեշտ» բառը... չի հանդիսանում «անփոխարինելի» բառի հոմանիշ, այն միաժամանակ չունի այնպիսի ձկունություն, որով օժտված են «թույլատրելի», «սովորաբար», «նպատակահարմար», «ողջամիտ» կամ «ցանկալի» բառերը...²⁷

Հիշատակված գործի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թեստը, որը կիրառել են Հանձնաժողովը և Դատարանը հետևյալն է.

1. ա՞ռկա է սահմանափակման սուր սոցիալական պահանջ,
2. համաչափ է սահմանափակումը սոցիալական սուր պահանջին,
3. սահմանափակումը տեղի՞ն է և համապատասխան:

Աղյուսակ 3-ը ցույց է տալիս, որ Էզելինի գործով և՛ Հանձնաժողովը և՛ Դատարանը Ֆրանսիայի իշխանությունների կողմից կիրառված սահմանափակումը քննել են վերը հիշատակված «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» սկզբունքի շրջանակներում: Հանձնաժողովը մատնանշում է, որ պարոն Էզելինի վարքագծի հնարավոր արդյունք հանդիսացող տպավորության հիման վրա կիրառված կարգապահական պատասխանատվությունը համատեղելի չէր «սուր սոցիալական պահանջի» խիստ չափանիշի հետ և հետևաբար չի կարող համարվել «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում»: Դատարանն ավելի լայն մեկնաբանություն կատարեց ևս մեկ անգամ նշեց, որ վիճարկվող կարգապահական սանկցիան պետք է դիտարկվի ամբողջ գործի լույսի ներքո, հաշվի առնելով խաղաղ հավաքների ազատության և *արտահայտվելու ազատության* իրավունքների կարևորությունը, որոնք *տվյալ դեպքում սերտորեն փոխկապակցված են*: Դատարանը ընդգծեց այն հանգամանքը, որ նույնիսկ կիրառված նվազագույն պատասխանատվության միջոցը չի կարող դիտվել «անհրաժեշտ ժողովրդավարական

²⁶ Եվրոպական կոնվենցիայի 8-ից 10-րդ հոդվածների բացառությունները: Ստիվեն Գրիեր, Բրիստոլի իրավագիտության համալսարանի դասախոս, Եվրոպայի խորհուրդ, H/inf (2002) 10, էջ 14:

²⁷ Տե՛ս Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության (Handyside v. UK) գոծով Եվրոպական դատարանի 1976թ. նոյեմբերի 4-ի վճիռը, մաս 48: Տե՛ս նաև Լինգենս ընդդեմ Ավստրիայի (Lingens v. Austria) գործով Եվրոպական դատարանի 1986թ. հունիսի 24-ի վճիռը, մասեր 37-ից 41-ը:

հասարակությունում»։ Հետևաբար դա հակասում էր 11-րդ հոդվածին²⁸ : Պետք է հիշատակել, որ դատավոր Պետտիտիին իր տարբերվող կարծիքում նշել էր.

... Ինչ վերաբերվում է հանրահավաքների ազատությանը և 11-րդ հոդվածի 2-րդ մասի մեկնաբանությանը, հստակ չէ այն, թե արդյոք միջոցառումից հետո կիրառված նվազագույն, սոսկ բարոյական, սանկցիան խոչընդոտ առաջացրեց հանրահավաքների ազատության իրավունքի իրականացման համար, թե ոչ:

Իմ կարծիքով, մեծամասնությունը բավարար ուշադրություն չի դարձրել հայեցողության սահմաններին/համաչափությանը (տե՛ս, *inter alia*, Հենդիսայդը, Սյուլերը և մյուսների, Մարկ Ինթերի գործերը) ...²⁹:

Մեկ այլ հարց, որը բարձրացվել է Ղատավորներ Ռիստալի, Պետտիտիի և Մաթչերի կողմից, կապված էր փաստաբանների մասնագիտական էթիկայի հետ: Ղատարանն իր հիմնավորումներում նշեց, որ.

... չարգելված խաղաղ հավաքին, տվյալ դեպքում հանրահավաքին, մասնակցելու անձի ազատությունը այնքան կարևոր է, որ այն չի կարող սահմանափակվել որևէ կերպ, նույնիսկ փաստաբանի համար, քանի որ դեռ նա անձամբ որևէ անօրինական արարք չի կատարել³⁰:

Ղատավոր Մաթչերը, իր մասնակի տարբերվող կարծիքում, մատնանշեց այն հանգամանքը, որ Կոնվենցիան, ինքնին, մասնագիտական էթիկային վերաբերող ուղղակի կանոններ չի պարունակում և այդ հարցը թողնում է անդամ-պետությունների լուծմանը: Գործի փաստերից ակնհայտ է դառնում, որ 1983 թվականի հուլիսի 25-ին Փաստաբանների խորհուրդը որոշում ընդունեց, որի համաձայն որևէ առիթ չկար 1983 թվականի փետրվարի 12-ին տեղի ունեցած դեպքերի կապակցությամբ պարոն Ռոլանդ Էգելինի նկատմամբ կարգապահական սանկցիա կիրառելու համար: Այնուամենայնիվ, չնայած այն հանգամանքին, որ Փաստաբանների խորհուրդը պարոն Էգելինի գործողություններում կարգապահական խախտում չգտավ, նա « ... խորհուրդ տվեց, որ Փաստաբանների միության նախագահը հիշեցնի ինչպես Էգելինին, այնպես էլ փաստաբանների միության ամբողջ կազմին *վարքագծի ավանդական կանոնների և որպես փաստաբան հանդես գալիս ողջամիտ դատողության կանոնների կիրառման մասին*:»³¹:

Ղատավոր Պետտիտիին նույնպես մատնանշել է այս փաստը, ընդգծելով, այն հանգամանքը, որ Ղատարանն ուղղակիորեն դատավոր-փաստաբան հարաբերություններից ծագող հարցերին չի անդրադարձել ³² , մինչդեռ Փաստաբանների խորհուրդը դա արել էր: Ինչպես նշել էր Ղատավոր Պետտիտիին իր տարբերվող կարծիքում « .. այստեղ մի պարադոքս կա, որը Ղատարանի հիմնավորումները հակասական է դարձնում ...»³³:

²⁸ Տե՛ս Էգելինն ընդդեմ Ֆրանսիայի (*Ezelin v. France*) գործով Եվրոպական դատարանի 1991թ. մարտի 18-ի վճիռը, մասեր 51-ից 53-ը:

²⁹ Տե՛ս նույն տեղում՝ դատավոր Պետտիտիի տարբերվող կարծիքը:

³⁰ Տե՛ս նույն տեղում՝ մաս 53:

³¹ Տե՛ս նույն տեղում՝ մաս 18:

³² Տե՛ս նույն տեղում՝ մաս 33:

³³ Տե՛ս նույն տեղում՝ Ղատավոր Պետտիտիի տարբերվող կարծիքը:

Իրավաբանների մասնագիտական գործունեության կազմակերպման և իրականացման համար պատմականորեն ձևավորվել են ներպետական նորմեր և միջազգային ստանդարտներ: Որոշ պետություններ իրենց սեփական ավանդույթներից ելնելով, իրավաբանների, ներառյալ փաստաբանների և պաշտպանների, իրավաբանի մասնագիտության կազմակերպման ու գործունեության իրականացմանը վերաբերող վարքագծի կանոններ են ընդունել³⁴: Միջազգայնորեն ճանաչված չափանիշները ձևակերպվել են Իրավաբանների դերի վերաբերյալ Միավորված Ազգերի Կազմակերպության հիմնական սկզբունքներում³⁵, Իրավաբանի մասնագիտության իրականացման ազատության մասին Եվրոպայի Խորհրդի (ԵԽ) հանձնարարականում³⁶, ինչպես նաև Եվրոպայի Միության Իրավաբանների վարքագծի կանոնագրքում, որը հրապարակվել է Եվրոպայի Միության փաստաբանների ընկերակցությունների և Իրավաբանական համայնքների Խորհրդի (այսուհետ՝ CCBE)³⁷ կողմից:

Հատկանշական է, որ ՄԱԿ-ի հիմնարար սկզբունքները վերահաստատել են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով (ՄԻՀՀ)³⁸, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով (ՔՔԻՄԴ)³⁹ և Տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրով (ՏՍՄԻՄԴ)⁴⁰ երաշխավորված մի շարք այնպիսի իրավունքներ և ազատություններ, ինչպիսիք են արդարադատության մատչելիության արդյունավետությունը, արհեստավարժ իրավաբանի օգնությունը և ինչպես նաև օրենքով սահմանված կարգով

³⁴Տե՛ս օրինակ Ֆինլանդիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Չեռնոսիայի, Հունաստանի, Լյուքսեմբուրգի իրավաբանների (փաստաբանների) գործունեության էթիկական կարգավորման օրենսդրական և վարչական մեխանիզմները:

³⁵ Իրավաբանների դերի վերաբերյալ Միավորված Ազգերի Կազմակերպության հիմնական սկզբունքներ, ընդունվել է Միավորված Ազգերի կազմակերպության Ութերորդ Կանգրեսում՝ ուղղված Հանցագործությունների կանխմանը և հանցագործների նկատմամբ վերաբերմունքին: Հավանա, Կուբա, 1990 թ. օգոստոսի 7-ից սեպտեմբերի 7-ը:

³⁶ Եվրոպայի Խորհուրդ, Իրավաբանի մասնագիտության իրականացման ազատության մասին Նախարարների կոմիտեի Հանձնարարական Rec(2000)21 ուղղված անդամ պետություններին (ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից, 2000 թվականի հեկտեմբերի 25-ին Նախարարների ներկայացուցիչների 727-րդ հանդիպման ժամանակ):

³⁷ Եվրոպայի Միության Իրավաբանների վարքագծի կանոնագիրը ընդունվել է 1998թ. հոկտեմբերի 28-ին կայացած CCBE-ի հերթական նստաշրջանում և փոփոխվել է 1998թ. նոյեմբերի 28-ին և 2002թ. դեկտեմբերի 6-ին կայացած հերթական նստաշրջաններում: CCBE-ն ներկայացնում է Եվրոպայի Միության Եվրոպական փաստաբանների ընկերակցությունները և Իրավաբանական միությունները, Եվրոպական տնտեսական գոտին և այլ միջազգային կազմակերպություններ: Այն ներառում է 18 երկրների, ներառյալ ԵՄ և ԵԽ անդամ պետությունները, փաստաբանների ընկերակցությունների ներկայացուցիչներ:

³⁸ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, ընդունված և հռչակված Գլխավոր Ասամբլեայի 1948թ. դեկտեմբերի 10-ի 217 A (III) բանաձևով:

³⁹ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, ընդունված և բացված ստորագրումների, վավերացումների և միանալու համար Միավորված Ազգերի կազմակերպության 1966թ. դեկտեմբերի 16-ի 2200A (XXI) բանաձևով: Ուժի մեջ է մտել 1976թ. մարտի 23-ին՝ 49-րդ հոդվածի համաձայն:

⁴⁰ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր, ընդունված և բացված ստորագրումների, վավերացումների և միանալու համար Միավորված Ազգերի կազմակերպության 1966թ. դեկտեմբերի 16-ի 2200A (XXI) բանաձևով: Ուժի մեջ է մտել 1976թ. հունվարի 3-ին՝ 27-րդ հոդվածի համաձայն:

ստեղծված անկախ տրիբունալի կողմից արդարացի և հրապարակային դատաքննության իրավունքները:

Իրավաբանի մասնագիտության իրականացման ազատության մասին ԵՄ հանձնարարականը, որը մշակվել է Եվրոպական կոնվենցիայի, ինչպես նաև Իրավաբանների դերի վերաբերյալ Միավորված Ազգերի Կազմակերպության հիմնական սկզբունքների նորմերի հիման վրա, ընդգծում է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ապահովման գործում իրավաբանների և իրավաբանների մասնագիտական միությունների դերը⁴¹:

Նաև հարկ է նշել, որ չնայած ՄԱԿ-ի հիմնական սկզբունքները և ԵՄ հանձնարարականը պարտադիր ուժ չունեն, այնուամենայնիվ դրանք իրավաբանի մասնագիտության համար սկզբունքներն են սահմանում այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են՝ իրավաբանի ու իրավաբանական ծառայությունների մատչելիությունը, իրավաբանների որակավորումը և վերապատրաստումը, իրավաբանների պարտականությունները և պատասխանատվությունը, նրանց մասնագիտական երաշխիքները, նրանց նկատմամբ իրականացվող կարգապահական վարույթները և այլն, որոնք բոլոր անդամ-պետությունները պետք է «[հարգեն] և հաշվի [առնեն] ... իրենց ազգային օրենսդրության ու պրակտիկայի շրջանակներում»⁴² »:

Հաշվի առնելով Եվրոպայում իրավաբանական մասնագիտության միասնականացման, ներդաշնակեցման և զարգացման անհրաժեշտությունը **CCBE**-ն 1988 թվականի հոկտեմբերի 28-ին ընդունեց Եվրոպայի Միության Իրավաբանների վարքագծի կանոնագիրքը, որն իրենից չափանիշների ևս մեկ աղբյուր է ներկայացնում և պետք է հաշվի առնվի իրավաբանի մասնագիտությունը կարգավորող իրավական դաշտը մշակելիս: Ենթադրվում է, որ Վարքագծի կանոնագիրքը պարտադիր ուժ ունի **CCBE**-ի բոլոր անդամ պետություններում, ներառյալ **CCBE**-ում դիտորդի կարգավիճակ ունեցող Եվրոպայի Միության և այլ Եվրոպական երկրներում: Ներկայումս տասներկու եվրոպական երկրներ ⁴³ ներառել են **CCBE**-ի Եվրոպայի Միության Իրավաբանների վարքագծի կանոնագրքի նորմերը իրենց ազգային օրենսդրության և պրակտիկայի շրջանակներում և **CCBE**-ի Եվրոպայի Միության Իրավաբանների վարքագծի կանոնագրքի նորմերը պարտադիր են այդ օտարերկրյա պետություններում աշխատող իրավաբանների (փաստաբանների) համար: Որոշ երկրներում, ինչպիսիք են Ֆինլանդիան և Իտալիան **CCBE**-ի Եվրոպայի Միության Իրավաբանների վարքագծի կանոնագրքի նորմերը կիրառելի են արտերկրում իրականացվելիք փաստաբանական գործունեության

⁴¹ Եվրոպայի Խորհուրդ, Իրավաբանի մասնագիտության իրականացման ազատության մասին Նախարարների կոմիտեի Rec(2000)21 հանձնարարական ուղղված անդամ պետություններին, նախաբան:

⁴² Տե՛ս Իրավաբանների դերի վերաբերյալ Միավորված Ազգերի Կազմակերպության հիմնական սկզբունքների և Եվրոպայի Խորհրդի Իրավաբանի մասնագիտության իրականացման ազատության մասին հանձնարարականի նախաբանները:

⁴³ Այդ երկրներն են Ավստրիան, Բելգիան, Դանիան, Գերմանիան, Լյուքսեմբուրգը, Նորվեգիան, Իսպանիան, Շվեդիան, Միացյալ Թագավորությունը (Անգլիայի և Ուելսի Իրավաբանների միությունը), Իսլանդիան, Միացյալ Թագավորությունը (Անգլիայի և Ուելսի Փաստաբանների միությունը), Հյուսիսային Իռլանդիան (իրավաբանների միությունը), Միացյալ Թագավորությունը (Շոտլանդիայի իրավաբանների միությունը):

նկատմամբ: Ինչ վերաբերում է Ֆրանսիային, ապա հատկանշական է, որ Ֆրանսիայի 180 փաստաբանների միություններ տարբեր դիրքորոշումներ են ընդունել այս կապակցությամբ: Որոշ փաստաբանական միություններ ներառել են հիշատակված նորմերն ամբողջությամբ, իսկ որոշներն էլ՝ մասնակիորեն: Ազգային փաստաբանների միության խորհրդի կողմից մշակված «Ներդաշնակեցված քաղաքականությունների և ընթացակարգերի ձեռնարկի» 3-րդ հոդվածի 3-րդ կետը, որը վերաբերում է Եվրոպայի իրավաբանների միջև հարաբերություններին, մասնավորապես հղում է կատարում Եվրոպայի Միության իրավաբանների վարքագծի կանոնագրքին⁴⁴:

Իրավաբանի մասնագիտության էթիկական կարգավորման ոլորտում առկա զարգացումները հանգեցնում են հիմնական պահանջների և ստանդարտների միասնականացմանը, ինչը կարող է իրավաբաններին օգնել իրենց կամ այլ երկրում էթիկական կարգավորման ենթակա հարցի բախվելիս համապատասխան միջոցի ձեռնարկման հարցում: Ինչպես հիշատակված է վերը, իրավաբանի գործունեությունը կարգավորող որոշ նորմեր ներառված են Եվրոպական կոնվենցիայում:

Իրավաբանի մասնագիտության իրականացման ազատության մասին ԵԽ հանձնարարական 1(3) սկզբունքը սահմանում է.

Իրավաբանները պետք է օժտված լինեն համոզմունքների, արտահայտվելու, տեղաշարժվելու, հավաքների և միավորման ազատությամբ, և մասնավորապես պետք է իրավունք ունենան մասնակցելու իրավունքի և արդարադատության իրականացմանը վերաբերող հարցերի հրապարակային քննարկումներին և անել օրենսդրական առաջարկություններ⁴⁵:

Իրավաբանի մասնագիտության իրականացման ազատության մասին ԵԽ հանձնարարականի VI (4) սկզբունքի համաձայն «Իրավաբանի կողմից վարքագծի կանոնները խախտելու դեպքում սանկցիա սահմանելիս պետք է հարգվի համաչափության սկզբունքը», իսկ նույն հանձնարարականի VI (3) սկզբունքը սահմանում է, որ «Կարգապահական վարույթները պետք է իրականացվեն Եվրոպական կոնվենցիայով սահմանված սկզբունքների և կանոնների լիարժեք հարգմամբ ...»⁴⁶:

Հատկանշական է, որ չնայած այն հանգամանքին, որ Էզելինի գործի քննության ժամանակ Իրավաբանի մասնագիտության իրականացման ազատության մասին ԵԽ հանձնարարականը չէր ընդունվել, Հանձնարարականում ներառված իրավաբանների (փաստաբանների) իրավունքներին վերաբերող շատ դրույթներ հստակորեն սահմանվել են Դատարանի վճռում, մասնավորապես խաղաղ հավաքին մասնակցելու ազատության վերաբերյալ Դատարանի հիմնավորման մեջ, որտեղ Դատարանը նշում էր հետևյալը.

... չարգելված խաղաղ հավաքին, տվյալ դեպքում հանրահավաքին, մասնակցելու անձի ազատությունը այնքան կարևոր է, որ այն չի կարող

⁴⁴ Կայք. <http://www.cnb.avocat.fr/Pedef/RIH.pdf>

⁴⁵ Տե՛ս Եվրոպայի Խորհրդի Իրավաբանի մասնագիտության իրականացման ազատության մասին հանձնարարականի, Սկզբունք VI (4) :

⁴⁶ Նույն տեղում, Սկզբունքներ VI (3) VI (4) :

սահմանափակվել որևէ կերպ, նույնիսկ փաստաբանի համար, քանի դեռ նա անձամբ որևէ անօրինական արարք չի կատարել⁴⁷:

Կարևոր է նշել, որ եզելինի գործում, Փաստաբանների միության խորհուրդը 1983 թվականի հուլիսի 25-ին որոշում ընդունեց սահմանելով, որ որևէ արարք չի կարող վերագրվել պարոն Ռոլանդ Էզելինին, և հետևաբար հանրահավաքի ժամանակ կատարված արարքների կապակցության պատասխանատվություն չկիրառվեց: Սակայն Գլխավոր դատախազի բողոքի հիման վրա Դիմումատու նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոց կիրառվեց:

Դատավոր Մաթչերի կողմից իր տարբերվող կարծիքում վեր հանված հարցերը հիմնականում վերաբերում էին այն փաստին, որ Կոնվենցիան, ինքնին չի սահմանում մասնագիտական էթիկային ուղղակիորեն վերաբերող կանոններ և դա թողնում է անդամ պետություններին, միևնույն ժամանակ նշելով, որ ազգային համապատասխան կանոնները պետք է համահունչ լինեն Կոնվենցիային: Դատավորը նաև հիշատակում է, որ տարբեր երկրներում Փաստաբանների միության անդամների վարքագծին վերաբերող մոտեցումները տարբերվում են և Ֆրանսիայի օրենսդրությանը համաձայն փաստաբանների միության անդամները պարտավոր են «*ողջախոհություն*»⁴⁸ պահպանել: Դատավոր Ռիսսոլայն իր մասնակի տարբերվող կարծիքում նույնպես նշել էր, որ.

... Ֆրանսիայի իրավաբանների կարգապահական կանոնագիրքը կարող է տարբեր լինել այլ երկրների նման կանոնագրքերից, մասնավորապես 1972 թվականի հունիսի 9-ի Դեկրետի 106-րդ հոդվածով սահմանված «արժանապատվության, մասնագիտական հեղինակության և ողջախոհության» սահմանները փաստաբանի կողմից խախտելու դեպքում պատասխանատվության առումով: Այնուամենայնիվ ենթադրվում է, որ պետությունները պետք է օգտվեն իրենց հայեցողության սահմաններից այն դեպքերում, երբ որոշվում է մասնագիտական վարքագծի կանոնների՝ ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ լինելու և կոնկրետ գործում դրանց խախտված լինելու հարցը ...⁴⁹:

Եվրոպական կոնվենցիայի դրույթների, ինչպես նաև Եվրոպական դատարանի վճիռների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատարանի ծառայողներից միայն դատավորներն են օժտված միջամտություններից հատուկ պաշտպանվածությամբ (ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի 2-րդ կետ): Եվրոպական դատարանը սահմանում է, որ դատական համակարգի ներկայացուցիչները պետք է վայելեն հասարակության վստահությունը և պետք է պաշտպանված լինեն փաստական հիմքից զուրկ քննադատական հարձակումներից: Ավելին, քանի որ նրանք ունեն *ողջախոհություն դրսևորելու* պարտականություն, դատավորները չեն կարող հրապարակայնորեն պաշտպանվել տարբեր հարձակումներից, ինչպես, օրինակ, կարող են անել քաղաքական գործիչները⁵⁰:

⁴⁷ Տե՛ս Էզելինն ընդդեմ Ֆրանսիայի (Ezelin v. France) գործով Եվրոպական դատարանի 1991 թ. մարտի 18-ի վճիռը, մաս 53:

⁴⁸ Տե՛ս նույն տեղում՝ Դատավոր Մատչերի տարբերվող կարծիքը :

⁴⁹ Տե՛ս նույն տեղում՝ Դատավոր Ռիսսոլայի մասնակի տարբերվող կարծիքը:

⁵⁰ Տե՛ս Դե Հաեսը և Գիյսելսն ընդդեմ Բելգիայի (De Haes and Gijssels v. Belgium) գործով Եվրոպական դատարանի 1997թ. փետրվարի 24-ի վճիռը, մաս 37:

Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեն, Իրավաբանի մասնագիտության իրականացման ազատության մասին հանձնարարականը մշակելիս այլ աղբյուրների հետ միասին նկատի է ունեցել նաև ՄԻԵԿ-ի դրույթները, ինչպես նաև առաջնորդվել է այն համոզմամբ, որ անհրաժեշտ է.

... արդարադատության իրականացման արդարացի համակարգ, որը իրավաբանների մասնագիտական պարտականությունների կատարման ընթացքում երաշխավորում է նրանց անկախությունը՝ առանց որևէ մարմնի կողմից ինչ որ պատճառով անհարկի ուղղակի կամ անուղղակի սահմանափակման, ազդեցության, դրդման, ճնշման, սպառնալիքի կամ միջամտության ...⁵¹:

Եվրոպական դատարանի վճիռների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով» արտահայտվելու ազատության իրավունքի միջամտությունը հիմնականում ներառում է այնպիսի գործեր, որոնք առնչվում են լրագրողների կողմից դատական քննության (դատավարության) ենթադրյալ կանխակալ լուսաբանման⁵², ինչպես նաև դատավորների ենթադրյալ զրպարտության համար⁵³ լրագրողների գործունեության սահմանափակմանը կամ նրանց նկատմամբ հետաքննության իրականացմանը:

ՄԱՍ III. ԳՈՐԾԻ ԷԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Էզելինն ընդդեմ Ֆրանսիայի գործով Եվրոպական դատարանի վճռում կան երկու ուշագրավ առանձնահատկություններ, որոնք էական դեր են ունեցել խաղաղ հավաքների ազատության իրավունքի ենթադրյալ խախտումների վերաբերյալ գործերի հետագա մեկնաբանման, ինչպես նաև հավաքների ազատությանը վերաբերող օրենքների համար ստանդարտների որոշման հարցում:

1. Հավաքների ազատության իրավունքի իրականացման բոլոր սահմանափակումները պետք է անցնեն համաչափության թեստը, այն է. նպատակին հասնելու համար միշտ պետք է ընտրվեն առավել նվազ միջամտություն սահմանող միջոցները, ներառյալ այն պատասխանատվության միջոցը, որը կիրառվում են հավաքների իրականացման համար սահմանված կանոնների խախտման դեպքում⁵⁴:

Դատարանը Էզելինի գործով վճռում նշեց, որ.

⁵¹ Տե՛ս Եվրոպայի Խորհրդի Իրավաբանի մասնագիտության իրականացման ազատության մասին հանձնարարականի նախաբանը:

⁵² Տե՛ս օրինակ Սանդի Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության (Sunday time v. the United Kingdom) գործով Եվրոպական դատարանի 1979թ. ապրիլի 26-ի վճիռը: Տե՛ս նաև Օբերվերն ու Գուարդիանը ընդդեմ Միացյալ Թագավորության (Observer and Guardian v. the United Kingdom) գործով Եվրոպական դատարանի 1991թ. հոկտեմբերի 24-ի վճիռը:

⁵³ Տե՛ս օրինակ Պրագերն ու Օբերշլիկն ընդդեմ Միացյալ Թագավորության (Prager and Oberschlick v. Austria) գործով Եվրոպական դատարանի 1995թ. ապրիլի 26-ի վճիռը:

⁵⁴ Տե՛ս Հավաքների ազատության վերաբերյալ օրենսդրության մշակման չափանիշներն ու միջազգային ստանդարտները: Կայք. http://www.osce.org/documents/odihr/2004/05/3675_en.pdf

... 11-րդ և 10-րդ հոդվածների 2-րդ կետերում նշված «սահմանափակում» հասկացությունը չի կարող մեկնաբանվել որպես այնպիսի միջոցների կիրառում, ինչպիսին է կարգապահական պատասխանատվությունը՝ անկախ այն հանգամանքից *դա կիրառվել է հավաքից առաջ թե հետո* (տես օրինակ, մասնավորապես ինչ վերաբերում է 10-րդ հոդվածին՝ Հենդիսայդի գործով 1976 թվականի դեկտեմբերի 7-ի վճիռը՝ շարք A թիվ 24, էջ 21, մաս 43 և Մյուլլերը և մյուսների գործով 1988 թվականի մայիսի 24-ի վճիռը, շարք A, թիվ 133, էջ. 19, կետ 28)⁵⁵:

2. Պետությունների կողմից անկարգությունները կանխելու անհրաժեշտությունը չպետք է հետ պահի մարդկանց իրենց համոզմունքները խաղաղ ձևով արտահայտելուց.

Դատարանն էզելինի գործով իր վճռում նշեց, որ.

... հավասարակշռության ձգտումը չի կարող արդյունքում հանգեցնել նրան, որ նման դեպքերում, փաստաբանները, վախենալով կարգապահական պատասխանատվությունից, խուսափեն իրենց համոզմունքներն արտահայտելուց: Ակնհայտ է, որ պարոն էզելինի նկատմամբ նշանակված պատասխանատվության միջոցը առավել մեղմ սանկցիաներից մեկն էր հանդիսանում ... այն հիմնականում բարոյական ազդեցություն ուներ ...: Այնուամենայնիվ, Դատարանը որոշեց, որ չարգելված խաղաղ հավաքին, տվյալ դեպքում հանրահավաքին, մասնակցելու անձի ազատությունը այնքան կարևոր է, որ այն չի կարող սահմանափակվել որևէ կերպ, նույնիսկ փաստաբանի համար, քանի որ դեռ *նա անձամբ որևէ անօրինական արարք չի կատարել ...*⁵⁶:

⁵⁵ Տե՛ս Էզելինն ընդդեմ Ֆրանսիայի գործով (Ezelin v. France) Եվրոպական դատարանի 1991թ. ապրիլի 26-ի վճիռը, մաս 39:

⁵⁶ Տե՛ս նույն տեղում՝ մասեր 52 և 53: